

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՅՑ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ (ՇՀՖԾ)

Պայմանագիր` /RFF/CS/SSS-2013/001

Ազդեցության գնահատում

«Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի

«Գյուղական ֆինանսներ» բաղադրիչի համար

«ՊԱՍՎ» հետազոտական-վերլուծական կենտրոն»
հասարակական կազմակերպություն (ՊԱՍՎ ՀԿԿ ՀԿ)
“Private agriculture, search and view” Research Analytical
Center” Non-Governmental Organization (PASV RAC NGO)

Բովանդակություն

Ամփոփագիր	4
Ներածություն	9
«Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագիր	10
Գյուղական ֆինանսավորում բաղադրիչ	11
ՇՀՖԾ «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի ազդեցության գնահատման հետազոտություն	12
Մեթոդը	12
Ընտրանքային համակցության նկարագիրը	14
Հողօգտագործում	15
Անասնապահություն	20
Եկամուտներ	24
Զբաղվածություն	25
Կանայք	26
Հետազոտության արդյունքներն ըստ ենթալորտների	27
ԳՖԿ ազդեցության գնահատում հարցվողների կողմից	39
Արդյունքների ամփոփում ըստ չափանիշների	41
Ակտուալության գնահատում	41
Էֆեկտիվության գնահատում (Effectiveness)	42
Արդյունավետության գնահատում (efficiency)	42
Ազդեցությունը գյուղական աղքատության վրա	43
Կայունության գնահատում	44
Սեռերի հավասարություն և կանայք	44
Պարտնյորների գնահատում	44
Գնահատման ամփոփում	45
Առաջարկություններ	47
Հավելվածներ	49

Հապավումներ

ԳՖԿ ԾԻԳ	«Գյուղական ֆինանսավորման կառույց» ծրագրի իրականացման գրասենյակ
ՇՀՖԾ	Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին ծրագիր
ՀՀ ԱԿԾ	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
ԳՏ	Գյուղացիական տնտեսություն
ՊԱՍՎ ՀՎԿ ՀԿ	«ՊԱՍՎ» հետազոտական-վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպություն
ԳԶՄՀ	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ՕԴԻԸ	ՕՊԵԿ-ը միջազգային զարգացման համար
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԳՏՏԶԾ	Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր
ԱԶ	Անհատ ձեռնարկատեր
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություն

Ամփոփագիր

- i. 2009-2013թթ.-ից ՉՖԿ կողմից, գյուղական փոքր և միջին ձեռնարկություններին և ֆերմերային տնտեսություններին են տրվել թվով 815 զարգացման վարկեր, որոնց ընդհանուր գումարը կազմել է 10 714 515 ԱՄՆ դոլար: Միջին վարկի չափը կազմել է 13 147 ԱՄՆ դոլար: Վարկերը տրվել են 9 բանկերի և 7 վարկային կազմակերպությունների միջոցով:
- ii. Վարկերի տրամադրման գործընթացի 2011-2012թթ. դանդաղումը հնարավոր է եղել փոխել ՉՖԿ կողմից իրականացված մարտավարական փոփոխություններով: Դրանցից ամենակարևորը վարկավորման գործընթացում վարկային կազմակերպությունների ներառումն էր, ինչն իրավիճակի կտրուկ փոփոխությունից բացի, նպաստեց նաև գյուղական բնակչության համեմատաբար աղքատ խմբերին վարկավորման գործընթացում ներառելու խնդրի լուծմանը:
- iii. Վարկերի տրամադրման նպատակներում մեծ տեսակարար կշիռ են կազմում անասնապահության զարգացման նպատակով տրվող վարկերը՝ 42 %: Համեմատաբար բարձր են նաև այգեգործության՝ 8 % և բուսաբուծության, կաթնամթերքի արտադրության, ձկնաբուծության զարգացման վարկերը՝ 5-ական տոկոս:
- iv. Ի տարբերություն Հայաստանում իրականացված նախորդ ծրագրերի, երբ ՉԶՄՀ-ն ծրագրի ազդեցության գնահատման համար իրականացնում էր հիմնարար (Baseline), միջանկյալ (Repeat) և ավարտական (Complete) հետազոտություններ, ՇՀՖԾ-ի համար այս մոտեցումը չի պահպանվել:
- v. Հետազոտությունը իրականացվեց ընտրանքային մեթոդով: ՇՀՖԾ գործունեության հանրապետության բոլոր 10 մարզերից ընտրվեցին 8-ը:
- vi. Ընտրանքում ընդգրկված 55 ֆերմերներ, որոնք 2009-2013թթ. ընկած ժամանակահատվածում ՉՖԿ վարկեր են ստացել, կազմել են շահառուների խումբը, իսկ 56 ֆերմերներ, որոնք ՉՖԿ վարկառու չեն համարվում, կազմել են ստուգիչ խումբը:
- vii. ՉՖԿ շահառու 55 գյուղացիական տնտեսությունների ստացած վարկերի միջին գումարը 1 վարկառու տնտեսության հաշվով կազմել է 2.2 մլն. դրամ: Վարկերը ստացվել են թվով 4 բանկերից և 3 վարկային կազմակերպություններից: Վարկերի անվանական տոկոսադրույքները տատանվում են 10-24 %-ի սահմաններում: Հարցումների տվյալներով, ցածր տոկոսադրույքով վարկերը տրամադրվում են հիմնականում վարկային կազմակերպությունների, իսկ բարձր տոկոսադրույքով վարկերը՝ բանկերի կողմից:
- viii. Մինչև ծրագիրը և ծրագրից հետո տվյալների համեմատությամբ, սեփական հողատարածքների միայն աննշան փոփոխություններ են արձանագրվել: Շահառու տնտեսություններում արձանագրվել է սեփական հողատարածքների աննշան աճ
- ix. Շահառու տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի 1 հա-ի բերքատվությունը, 2013թ. բացառությամբ բանջարանոցային մշակաբույսերի, բարձր է ընդամենը հարցման տվյալներից:
- x. մինչև ծրագիրը և ծրագրից հետո, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության փոփոխություններն, ընդհանուր առմամբ նույնն են ընտրանքային համակցության բոլոր խմբերի համար: Նույնիսկ այգեգործական և բուսաբուծական նպատակներով վարկառու տնտեսություններում վիճակն ավելի լավ չի:

- xi. Համաձայն ՀՀ ԱԿԾ տվյալների¹ 2009թ. համեմատությամբ 2012թ-ին գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունները, բացառությամբ պտղի, ավելացել են: Իսկ պտղի բերքատվության նվազումը բարձր է:
- xii. Ընդամենը հարցման և կոնտրոլ խմբի տնտեսություններում, դիտարկվող ժամանակահատվածում բուսաբուծական մթերքների ապրանքայնության մակարդակի նվազում է արձանագրվել
- xiii. Ի տարբերություն ընդամենը հարցման և կոնտրոլ խմբի տնտեսությունների, շահառուների խմբում ապրանքայնության աճ է նկատվում: Այս խմբի տնտեսություններում, բացի հացահատիկից և պտղից, որոնց ապրանքայնության մակարդակում աննշան նվազում կա, մյուս մթերքների ապրանքայնության աճը նկատելի է: Բանջարեղենի ապրանքայնության մակարդակը շահառուների խմբում ավելացել է 9.1, իսկ կարտոֆիլինը՝ 1.4 տոկոսով, այն դեպքում, երբ կոնտրոլ խմբի տնտեսություններում բանջարեղենի ապրանքայնությունն ավելացել է միայն 0.9 տոկոսով, իսկ կարտոֆիլի ապրանքայնությունը նվազել է 9.6 տոկոսով:
- xiv. Ամենաաղքատ տնտեսություններում ներտնտեսային կարիքների համար օգտագործված սեփական արտադրության գյուղատնտեսական մթերքների մակարդակը մինչև ծրագիրը և ծրագրից հետո մնացել է նույն մակարդակի վրա: Եկամտի միջին խմբերում ավելանում է հացահատիկի և կարտոֆիլի ներտնտեսային կարիքների համար օգտագործումը: Տնտեսությունների ամենահարուստների խմբում կրճատել են անասնապահության համար ծախսվող հացահատիկի ծավալները՝ փոխարենը ավելացնելով կերերի ծավալները:
- xv. Ընտրանքային համակցության 111 գյուղացիական տնտեսությունների 71-ն են զբաղվում անասնապահությամբ: Անասնապահությամբ չզբաղվող 40 տնտեսությունները հավասար՝ 20-ական բաժանվել են շահառուների և կոնտրոլ խմբերում:
- xvi. Դիտարկվող ժամանակահատվածում ընդամենը ընտրանքային համակցության բոլոր խմբերի տնտեսություններում գրանցվել է անասնազվխաքանակի աճ: Անասնազվխաքանակի աճն ավելի ակնառու է շահառուների և այդ թվում անասնապահության վարկառու տնտեսություններում:
- xvii. Անասնապահական մթերքների ապրանքայնության աճի մակարդակով նույնպես ՉՖԿ շահառու տնտեսությունները գերազանցում են կոնտրոլ խմբի տնտեսություններին: Շահառուների խմբում աննշան նվազել է միայն տավարի մսի, իսկ անասնապահության վարկառուների խմբում՝ միայն ոչխարի մսի ապրանքայնության մակարդակը:
- xviii. Ընդամենը հարցման տվյալներով գյուղմթերքների վերամշակման ծավալների ավելացում է գրանցվել: Ընդ որում, մինչև ծրագիրը և ծրագրից հետո ժամանակահատվածում, վերամշակման ծավալների աճը ՉՖԿ շահառուների խմբում գերազանցում է կոնտրոլ խմբում գրանցված աճին:
- xix. Վերամշակումը թե ծրագրից առաջ և թե ծրագրից հետո հիմնականում իրականացվել է սեփական սպառման համար: Վերամշակված արտադրանքներից միայն մրգի և բանջարեղենի պահածոների ու մսամթերքների դեպքում է գրանցվել վաճառքի ծավալների փոքր աճ:
- xx. Ընդամենը հարցված տնտեսություններում դիտարկվող ժամանակահատվածում գրանցվել է եկամտի աճ: Սակայն, եթե կոնտրոլ խմբի տնտեսություններում այդ աճը 1 տնտեսության հաշվով կազմում է 330 հազ. դրամ, ապա շահառու տնտեսությունների մոտ եկամտի աճը հասնում է 2.32 մլն. դրամի, ինչը ավելի քան 7 անգամ գերազանցում է կոնտրոլ խմբի ցուցանիշին: Հատկանշական է, որ շահառու տնտեսությունների եկամտի աճի 64.7 %-ը ստացվել է գյուղատնտեսական գործունեությունից

¹ -ա՞ր՞»Յ՞ՍՄՇՅ ՝ա՞Նա՞իա՞ՕԱ՞ձՕՅ ՝ ՝Օ՞մ՞ա՞ձ՞ՕԱ՞ձ՞ՕՅ, 2012Ա. Նա՞ձՅ՞Ի՞ճ-՝1»՛ի՞ՍՍՍ»՞ճ,

- xxi.** Շահառու տնտեսությունների եկամտի աճը նպաստել է տնտեսությունների ընդլայնմանը, որն իր հերթին հանգեցրել է նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- xxii.** Շահառու տնտեսությունները ավելացնում են վարձու աշխատանքի բաժինը, կրճատելով տնտեսության անդամների և ընկեր-բարեկամների աշխատանքը: Ճիշտ հակառակ վարքագիծն են դրսևորել կոնտրոլ խմբի տնտեսությունները, որոնք շարունակում են հույսը դնել ընտանիքի անդամների և ընկեր-բարեկամների վրա:
- xxiii.** Շահառու միջին տնտեսությունում, մինչև ծրագիրը և հետո ժամանակահատվածում ավելացած մշտական և ժամանակավոր աշխատատեղերի թիվը կազմել է 3.54, իսկ կոնտրոլ խմբի տնտեսություններում՝ այն նվազել է 0.75 աշխատատեղով: Այսպիսով, ՉՖԿ-ի ծրագրի շնորհիվ, շահառու միջին տնտեսությունում աշխատատեղերի զուտ աճը կազմել է 4.29: ՉՖԿ շահառու տնտեսությունների ընդհանուր թիվը, կազմում է 724, ինչը թույլ է տալիս հաշվարկել, որ ՉՖԿ ծրագրի շնորհիվ հանրապետության գյուղական վայրերում 3106 վճարվող նոր աշխատատեղ է ստեղծվել:
- xxiv.** Հարցված կանանցից 55-ը հայտարարել են, որ գյուղացիական տնտեսությանը վերաբերող կարևոր որոշումներն ընդունում են տնտեսության գլխավորի՝ ամուսնու հետ միասին, իսկ 6-ը հայտարարել են, որ միանձնյա են ընդունում այդ որոշումները:
- xxv.** Հարցված կանանց 35.7 %-ը (շահառուների մոտ՝ 36.4%) ունեն հողի, 9.5 %-ը (7.3 %)՝ անասունների, 26.2 %-ը (32.7 %)՝ տան կամ այլ շինության և 5.6 %-ը (3.6 %) ունեն այլ անշարժ գույքի սեփականություն:
- xxvi.** Կանանց 16.7 %-ը (շահառուների մոտ՝ 29.1 %) վերջին տարվա ընթացքում վարկ են վերցրել: Կանանց 11.1 %-ը (շահառուների մոտ՝ 5.5 %) դեմ են եղել, երբ իրենց ամուսինը որոշել է դիմել ՉՖԿ վարկի համար: Իսկ եթե դուք ցանկանաք վարկ վերցնել, Ձեր ամուսինը համաձայն կլինի հարցին, կանանց 56.3 %-ը (շահառուների մոտ՝ 78.2 %) դրական պատասխան են տվել, 20.6 %-ը (շահառուների մոտ՝ 14.5 %)՝ բացասական, իսկ կանանց 23.0 %-ը (շահառուների մոտ՝ 7.3 %) «գերադասել է լռել»:
- xxvii.** Հարցումներով հանրապետության 4 մարզերից ընտրվել են 14 ջերմոցային տնտեսություններ, որոնցից 10-ը ՉՖԿ շահառու և 4-ը ոչ շահառու ջերմոցային տնտեսություններ: Ոչ շահառու 4 ջերմոցային տնտեսությունները կազմել են կոնտրոլ խումբը:
- xxviii.** Շահառու ջերմոցներում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 ջերմոցի հաշվով ավելացել է 1.4-ով, այն դեպքում, երբ դիտարկվող ժամանակահատվածում կոնտրոլ խմբի միջին ջերմոցում արձանագրվել է 0.2 աշխատատեղի կրճատում:
- xxix.** Հաշվի առնելով ՉՖԿ կողմից ֆինանսավորված ջերմոցային տնտեսությունների թիվը՝ 50 կարող ենք հաշվարկել, որ շահառու ջերմոցային տնտեսություններում ՉՖԿ-ի ծրագրի շնորհիվ ստեղծվել է 80 նոր աշխատատեղ:
- xxx.** Շահառու ջերմոցներում, կոնտրոլ խմբի ջերմոցների համեմատությամբ, տնտեսական արդյունավետության բավականին բարձր աճ է արձանագրվել: ՉՖԿ շահառու ջերմոցների նման առավելության հիմնական պատճառը, կոնտրոլ խմբի ջերմոցների համեմատությամբ ավելի փոքր լինելն է: Հավանաբար փոքր ջերմոցային տնտեսություններն հայկական շուկայի համար ավելի ձկուն են և արդյունավետ: Համեմայնդեպս, ավելի քիչ ծախսերով, ավելի բարձր եկամուտ է ստացվել:
- xxxi.** Հարցված ՉՖԿ շահառու զինեգործարաններում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 գործարանի հաշվով ավելացել է 4-ով:

- xxxii.** Հաշվի առնելով ՊՖԿ կողմից ֆինանսավորված գինեգործարանների թիվը՝ 8, կարող ենք հաշվարկել, որ հանարապետության գինեգործության ենթաուղղորտում, ՊՖԿ ծրագրի շնորհիվ ստեղծվել է 32 նոր աշխատատեղ:
- xxxiii.** Գինեգործությունում, համեմատած ուսումնասիրված մյուս ենթաուղղորտների հետ, տնտեսական արդյունավետության աճը շատ բարձր չէ: Այսպես, չնայած նրան, որ ՊՖԿ ծրագրի շնորհիվ միջին գինեգործարանի զուտ հասույթն աճել է ավելի քան 56 հազար ԱՄՆ դոլարով, եկամուտ/ծախս գործակցի աճը շատ բարձր չէ՝ 0.1-ից 0.3:
- xxxiv.** Ձկնաբուծական ձեռնարկությունները զբաղվում են ձկան, իսկ նրանցից մեկը՝ նաև ձկնկիթի արտադրությամբ: Հարցված 4 ձեռնարկություններից 3-ը չեն ունեցել ջրօգտագործման թույլտվություն և նրանցից 1-ն է միայն ՊՖԿ վարկից հետո ստացել այդ թույլտվությունը:
- xxxv.** Հարցված ձկնաբուծական ձեռնարկություններում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 ձեռնարկության հաշվով ավելացել է 1-ով:
- xxxvi.** Հաշվի առնելով ՊՖԿ կողմից ֆինանսավորված ձկնաբուծարանների թիվը՝ 26, կարող ենք հաշվարկել, որ հանարապետության ձկնաբուծության ենթաուղղորտում, ՊՖԿ ծրագրի շնորհիվ ստեղծվել է 26 նոր աշխատատեղ:
- xxxvii.** Ձկնաբուծությունը բավականին բարձր տնտեսական արդյունավետության մակարդակ ունի: ՊՖԿ ծրագրի արդյունքում, միջին ձեռնարկության հաշվով, տարեկան հասույթն աճել է մոտ 20 հազ. ԱՄՆ դոլարի չափով, իսկ եկամուտ/ծախս գործակցին աճել է և մինչև ծրագիրը ժամանակի 2.9-ից հասել է 3.1-ի:
- xxxviii.** Կաթի վերամշակման միջին ձեռնարկությունը մշակում է 11.8 հա սեփական և 5 հա վարձակալած հողատարածք, ունի 10 գլուխ կովեր, որի կաթը մշակում է ձեռնարկությունում: Միջին ձեռնարկության կաթի մթերման տարեկան հզորությունը մինչև ՊՖԿ ծրագիրը կազմել է 169 տոննա, իսկ ծրագրից հետո՝ 252 տոննա: Ծրագրի շնորհիվ, միջին ձեռնարկությունում կաթնամթերքի արտադրության ծավալները աճել են մոտ 40 տոննայով:
- xxxix.** Հարցված կաթնամթերքի ձեռնարկություններում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 ձեռնարկության հաշվով ավելացել է 2.5-ով:
- xl.** հաշվի առնելով ՊՖԿ կողմից ֆինանսավորված կաթի վերամշակման ձեռնարկությունների թիվը՝ 11, կարող ենք հաշվարկել, որ հանարապետության կաթի վերամշակման ենթաուղղորտում, ՊՖԿ ծրագրի շնորհիվ ստեղծվել է մոտ 28 նոր աշխատատեղ:
- xli.** Կաթի վերամշակումը տնտեսական արդյունավետության մակարդակով գիջում է, ուսումնասիրված մյուս ենթաուղղորտներին:
- xlii.** Ընդհանուր առմամբ, ՇՀՖԾ «Գյուղական ֆինանսներ» բաղադրիչի ակտուալության ռեյտինգը բավարար է (5), քանի որ ծրագրի նպատակներն ընդհանուր առմամբ համապատասխանում են երկրի կողմից իրականացվող աղքատության կրճատման ռազմավարությանը և գյուղական աղքատների կարիքներին:
- xliii.** ՊՖԿ գործունեության էֆեկտիվության ռեյտինգը բավարար է (5):
- xliv.** ՊՖԿ գործունեության արդյունավետության ռեյտինգը չափավոր բավարար է (4):
- xlv.** Ընդհանուր առմամբ, գյուղական աղքատության վրա ծրագրի ազդեցության ռեյտինգը չափավոր բավարար է (4):
- xlvi.** ՊՖԿ ծրագրերի կայունության ռեյտինգը բավարար է (5) է:
- xlvii.** Ընդհանուր առմամբ կանայք խնդիրներ չեն ունեցել ծրագրից օգտվելու հարցում: ՊՖԿ ծրագրերի սեռային հավասարության ռեյտինգը բավարար է (5) է:
- xlviii.** ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի իրականացումը ընդհանուր առմամբ հաջողված կարելի է համարել և ՊՖԿ Մոնիտորինգի և գնահատման ուղեցույցով սահմանված 6 բալանի համակարգով² գնահատել **Բավարար (5)**:

² -1=ԷՇԵԻ՝ ԳՄՅՅԳՅԳՅ, 2=ԳՄՅՅԳՅԳՅ, 3=ձՅԳՅԳՅԳՅ, 4=ձՅԳՅԳՅԳՅՄՅԳՅԳՅ, 5=ՄՅԳՅԳՅԳՅ, 6=ԷՇԵԻ՝ ՄՅԳՅԳՅԳՅ

Ներածություն

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը սկսվեց 2008թ. վերջին, լրջորեն հարվածեց նաև Հայաստանի տնտեսությանը: Երկրի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2008թ., ի տարբերություն 2000-ական թվականների տարեկան միջին երկնիչ աճի, նվազեց և կազմեց 6.9 %: 2009թ. արձանագրվեց Հայաստանի տնտեսության խոր անկում՝ 14.1%: Որպես հետևանք, նույն տարում աղքատության մակարդակը 1998թ. հետո, առաջին անգամ աճեց: 2010թ. Հայաստանի տնտեսությունը փոքր աճ ապահովեց՝ 2.2 %, որը սակայն չկասեցրեց աղքատության ավելացման միտումները: Միայն 2011թ., երբ տնտեսության աճը կազմեց 4.7 %, աղքատության մակարդակի աճը հնարավոր եղավ կասեցնել: 2012թ., երբ տնտեսության աճը կազմեց 7.2 % սկսվեց աղքատության մակարդակի դանդաղ իջեցում:

2012թ. հանրապետության բնակչության ամեն երրորդը՝ 32.4%, աղքատ է եղել: Նրանց 13.5%-ը եղել են շատ աղքատ, իսկ 2.8%-ը՝ ծայրահեղ աղքատ: Չնայած նրան, որ 2012թ. աղքատության մակարդակը 2011թ. համեմատությամբ նվազել է, սակայն 2008թ. համեմատությամբ թե աղքատության մակարդակով, թե դրա խորությամբ ու սրությամբ դեռևս զգալիորեն զիջում է:

Աղքատության մակարդակի 2008 և 2012 թթ. հիմնական ցուցանիշները մարզերի կտրվածքով բերված է Հավելված 1-ում:

Սոցիալ-տնտեսական նման պայմաններում, նույն 2008 թ. մայիս ամսին, Հայաստանում մեկնարկեց «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագիրը (ՇՀՖԾ), որը հանդիսանալով Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) նախորդ՝ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի (ԳՏՏԶԾ-RAEDP) տրամաբանական շարունակությունը, նպատակուղղված էր հանրապետության գյուղական վայրերում աղքատության կրճատմանը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ՇՀՖԾ ավարտական գնահատման նպատակով իրականացված ուսումնասիրության արդյունքներով:

«Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագիր

«Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագիրը (ՇՀՖԾ), որն իր գործունեությունը Հայաստանում սկսել է 2008թ. մայիս ամսին և ավարտվել 2013թ. հունիսին, ֆինանսավորվել է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՕՊԵԿ-ը միջազգային զարգացման համար (OFID), Դանիայի կառավարության, ՀՀ կառավարության, ֆինանսական հաստատությունների և ծրագրի շահառուների միջոցներով: Ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 36 միլիոն ԱՄՆ դոլար:

ՇՀՖԾ հիմնական նպատակն է բարելավել Հայաստանի գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, որին հասնելու համար նախատեսվում էր. ա) աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողներին և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող ձեռնարկություններին, բ) տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից միջոցներ, որոնք կբավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը, գ) աջակցել Հայաստանում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը՝ փոքր և միջին վարկերի պահանջարկը բավարարելու համար, դ) սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների վիճակի բարելավմամբ օժանդակել աղքատության կայուն նվազեցմանը:

Ծրագիրը, որի գործունեությունը ընդգրկել է հանրապետության ամբողջ տարածքը, ունեցել է հետևյալ 3 բաղադրիչները.

1. Գյուղական ֆինանսավորում – 14 640,0 հազ. ԱՄՆ դոլար՝ 40.3 % ընդհանուր ծրագրում,
2. Գյուղական ենթակառուցվածքներ – 18 672,5 հազ. ԱՄՆ դոլար՝ 51.4 % ընդհանուր ծրագրում,
3. Ծրագրի կազմակերպում և իրականացում – 2 999,9 հազ. ԱՄՆ դոլար՝ 8.3 % ընդհանուր ծրագրում:

Գյուղական ֆինանսավորման բաղադրիչը բաղկացած է 3 ենթաբաղադրիչներից.


1. Գյուղական բաժնետիրական հիմնադրամ,
2. Ներդրումային վարկեր փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ),
3. Ֆերմերային տնտեսությունների զարգացման վարկեր:

ՇՀՖԾ թիրախային խմբերն են հանդիսանում ֆերմերային տնտեսությունները, գյուղական հողագուրկները, գործազուրկները, թերզբաղվածները, ինքնազբաղվածները և գյուղական աղքատ կանայք:

Ծրագրի նպատակների իրականացման համար ԳԶԱՀ աջակցությամբ ավելի վաղ գործող «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի» (ԳՏՏԶԾ) ընթացքում ստեղծված Գյուղական ֆինանսավորման կառույցը (ԳՖԿ) իրականացնում է «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի ներդրումային վարկեր ՓՄՁ-ներին և ֆերմերային տնտեսությունների զարգացման վարկեր ենթաբաղադրիչները՝ ՇՀՖԾ կողմից տրամադրված ֆինանսավորման միջոցով՝ վերաֆինանսավորելով մասնակից ֆինանսական հաստատությունների վարկերը:

խնդրի լուծմանը: Այսպես, եթե մինչև 2012թ. միջին վարկի չափը կազմում էր 23.741 ԱՄՆ դոլար, ապա վարկային կազմակերպություններին վարկավորման գործընթացում ներառելուց հետո, միջին վարկի չափը կազմեց 10.165 ԱՄՆ դոլար, իսկ միայն վարկային կազմակերպություններում՝ 9.377 ԱՄՆ դոլար: Վարկային կազմակերպություններին ներգրավելուց զատ, դրամային վարկերի տրամադրման հնարավորությունը է տրվել (մինչ այդ վարկերը տրվում էին միայն ԱՄՆ դոլարով):

4. **ԳՖԿ** գործունեությունը ընգրկում է հանրապետության ամբողջ տարածքը: Վարկերի



ստացման տեսանկյունից առաջատարներն են Արարատի և Արմավիրի մարզերը, որոնց գյուղացիական տնտեսությունները ստացել են վարկային միջոցների մոտ կեսը: Այս տեսակետից ետ են մնում Տավուշի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերը, որտեղ բաշխված վարկային միջոցները կազմում են ընդհանուրի միայն 1-3 տոկոսը: ԳՖԿ-ն այստեղ կարևոր խնդիր ունի լուծելու, քանի որ աղքատության մակարդակը համեմատաբար բարձր է հանրապետության սահմանամերձ և լեռնային գյուղերում և վարկերի ստացման ետնապահների թվում Տավուշի ու Շիրակի մարզերի առկայությունը, ՇՀՖԾ նպատակների իրականացման տեսանկյունից թերացում կարելի է համարել:

5. Վարկերի տրամադրման նպատակներում մեծ տեսակարար կշիռ են կազմում անասնապահության զարգացման նպատակով տրվող վարկերը՝ 42 %: Համեմատաբար բարձր են նաև այգեգործության՝ 8 % և բուսաբուծության, կաթնամթերքի արտադրության, ձկնաբուծության զարգացման վարկերը՝ 5-ական տոկոս: Վարկերի տրամադրման առաջին տարիներին վարկերի մեծ մասի նպատակը նշվում էր այլ գյուղատնտեսություն, որոնց բաժինը ընդհանուր փաթեթում կազմում է 17%:

ՇՀՖԾ «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի ազդեցության գնահատման հետազոտություն

Մեթոդը

6. Ի տարբերություն Հայաստանում իրականացված նախորդ ծրագրերի, երբ ԳԶԱՀ-ն ծրագրի ազդեցության գնահատման համար իրականացնում էր հիմնարար (Baseline), միջանկյալ (Repeat) և ավարտական (Complete) հետազոտություններ, ՇՀՖԾ-ի համար այս մոտեցումը չի պահպանվել: Ծրագրի իրականացման ընթացքի գնահատումն այս դեպքում իրականացվել է ՇՀՖԾ կողմից իրականացվող մոնիտորինգային այցելությունների և ԳԶԱՀ պարբերաբար իրականացվող առաքելությունների ընթացքում: Արդյունքում, ծրագրի իրականացման տարածքի վերաբերյալ մեկնարկային տեղեկատվության բացակայությունը որոշակի

դժվարություններ առաջացրեց ծրագրի ավարտական գնահատման համար արժանահավատ տեղեկատվության հավաքագրման տեսանկյունից:

7. Մեկնարկային և միջանկյալ տեղեկատվության պակասը լրացնելու նպատակով հետազոտության իրականացման մեթոդաբանությունում, համաձայն ԳԶՄՀ Ծրագրի ավարտական գնահատման ուղեցույցի⁴, կիրառվեց տվյալների հավաքագրման «մինչև ծրագիրը և հետո», հիշողության օգտագործման, կոնտրաֆակտ վերլուծության մեթոդները: Նույն նպատակով կիրառվեցին նաև առկա երկրորդային տեղեկատվության հավաքագրման (ԳՖԿ, ԱԿԾ, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, մարզպետարաններ, գյուղական համայնքներ և այլ), հետազոտության քանակական և որակական մեթոդները: Որպես տվյալների հավաքագրման հիմնական մեթոդ, կիրառվեց անմիջապես տնտեսություն (ձեռնարկություն) այցելելու ուղղակի դիտարկման մեթոդը:
8. Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հիշողության օգտագործման մեթոդի կիրառման արդյունքում հետազոտության տվյալների բազայի որակական առումով որոշ կորուստներ ունեցանք: Հարցազրույցի ժամանակ, ֆերմերները չկարողանալով վերհիշել 2009թ` ծրագրից առաջ տվյալները, որոշ դեպքերում կրկնում էին ընթացիկ տվյալները, որի արդյունքում վերլուծության ժամանակ, «մինչև ծրագիրը և հետո» համեմատություններն առանձին դեպքերում անհիմաստ էին դառնում:
9. Հետազոտությունը իրականացվեց ընտրանքային մեթոդով: ՇՀՖԾ գործունեության հանրապետության բոլոր 10 մարզերից ընտրվեցին հետևյալ 8 մարզերը` Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերը: Ընտրանքը կատարվել է այն հաշվով, որպեսզի ներառվեն հանրապետության հիմնական բոլոր` լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիները:

Գլխավոր և ընտրանքային համակցությունները:

10. Գյուղական ֆինանսավորում բաղադրիչ - ԳՖԿ: 2008-2013թթ. ընթացքում ԳՖԿ ուղղակի շահառուներ են հանդիսացել թվով 815 տարբեր իրավակազմակերպական տեսակի տնտեսավարող սուբյեկտներ: ԳՖԿ գործունեության ազդեցության գնահատման ընտրանքային համակցությունը կազմել է 138 միավոր (Հավելված 1), որոնց ընտրությունը կատարվել է պատահական սկզբունքով և որոնցում ընդգրկել են նաև ԳՖԿ գործունեության ազդեցության գնահատման Լիազորությունների շրջանակում (Հավելված 2) առաջարկված 6 ենթաուղրտների տնտեսությունները.

- առաջնային անասնապահություն – 24 վարկառու,
- այգեգործություն – 16 վարկառու,
- ջերմոցային տնտեսություն - 14 վարկառու,
- ձկնաբուծություն – 5 վարկառու,
- կաթնամթերքի արտադրություն – 4 վարկառու,
- գինեգործություն - 4 վարկառու,
- բուսաբուծություն -14 վարկառու,
- այլ գյուղատնտեսական ծառայություններ – 1 վարկառու,
- կոնտրոլ խումբ - 56 գյուղացիական տնտեսություն:

Ընտրանքում ընդգրկված վարկառուները ներկայացնում են հանրապետության թվով 28 գյուղական համայնքներ: Բացի վարկառուներից, նույն համայնքներում, պատահական սկզբունքով ընտրվել են նաև թվով 56 այլ գյուղացիական տնտեսություններ, որոնք կազմել են այսպես կոչված «ստուգիչ խումբը» (control group): Այս խմբի տնտեսությունների (որոնք ՇՀՖԾ

⁴ Guidelines for Project Completion, 2006, IFAD, Programm Management Department

վարկեր չեն ստացել), մի մասը դիտարկվող ժամանակահատվածում վարկեր են ստացել այլ կազմակերպություններից, իսկ մյուս մասը ընդհանրապես չեն օգտվել վարկային միջոցներից: Ընտրության այսպիսի մեթոդով հանրապետության համար օգտագործել որակական տեսանկյունից 2 տարբեր ստուգիչ խմբեր:

11. Հարցաթերթեր: Հետազոտության իրականացման նպատակով պատրաստվել են թվով 5 հարցաթերթեր.
- a. Գյուղացիական տնտեսության հարցաթերթ,
 - b. Ջերմոցային տնտեսության հարցաթերթ,
 - c. Ձկնաբուծական տնտեսության հարցաթերթ,
 - d. Կաթի վերամշակման ձեռնարկության հարցաթերթ,
 - e. Գինեգործական ձեռնարկության հարցաթերթ:

Գյուղացիական տնտեսության հարցաթերթով հարցվել են անասնապահության, այգեգործության, բուսաբուծության, այլ գյուղատնտեսական ծառայությունների, ինչպես նաև կոնտրոլ խմբի գյուղացիական տնտեսությունները: Ջերմոցային, ձկնաբուծական, կաթնամթերքի արտադրության և գինեգործական ձեռնարկությունները հարցվել են առանձին հարցաթերթերով:

12. Ղաշտային աշխատանքներ: Ղաշտային աշխատանքներն սկսվել են 2013թ. նոյեմբերի 1-ից և ավարտվել նոյեմբերի 20-ին: Հարցումներն, ըստ համապատասխան հարցաթերթերի, իրականացվել են անմիջապես տնտեսություն այցելելու միջոցով: Համայնքների և ձեռնարկությունների հարցումներին մասնակցել են համայնքների և ձեռնարկությունների ղեկավարները կամ այլ պատասխանատու անձիք, իսկ գյուղացիական տնտեսություններում՝ տնտեսության զլխավորը կամ տնտեսության այն չափահաս անդամը՝ ով մասնակցում է տնտեսության մակարդակով որոշումների ընդունմանը:

Ընտրանքային համակցության նկարագիրը

13. Հարցերի պատասխանողներից 71-ը տղամարդ են, իսկ 40-ը՝ կին: 73 տնտեսություններում հարցերին պատասխանել են գյուղացիական տնտեսությունների ղեկավարները, իսկ 38-ում՝ տնային տնտեսության այլ անդամներ:

14. ԳՖԿ գործունեության ազդեցության գնահատման համար, ելնելով ոլորտային առանձնահատկություններից, ձկնաբուծական, ջերմոցային, կաթի վերամշակման և գինեգործական ձեռնարկությունները հարցվել են առանձին հարցաթերթերով: Այգեգործական և անասնապահական նպատակներով վարկավորված ֆերմերները հարցվել են «Գյուղացիական տնտեսության հարցաթերթով»: Ընտրանքում ընդգրկված 55 ֆերմերներ, որոնք 2009-2013թթ. ընկած ժամանակահատվածում ԳՖԿ վարկեր են ստացել, կազմել են շահառուների խումբը, իսկ 56 ֆերմերներ, որոնք ԳՖԿ վարկառու չեն համարվում, կազմել են ստուգիչ խումբը: Ձկնաբուծական, ջերմոցային, կաթնամթերքի արտադրության և գինեգործական ձեռնարկությունների տվյալների վերլուծությունն իրականացվել է առանձին: Այս խմբերից միայն ջերմոցային տնտեսության խմբում ենք ունեցել կոնտրոլ խումբ: Հարցումներով ընդգրկված 5 ձկնաբուծական տնտեսություններից 1-ի («Կատրան» ՍՊԸ) հարցաթերթում բացակայել են ձեռնարկության տնտեսական գործունեության տվյալները (ձեռնարկությունը չի ներկայացրել), ինչի պատճառով այդ ձեռնարկության բոլոր տվյալները տվյալների բազայում անտեսվել են:

15. ԳՖԿ շահառու 55 գյուղացիական տնտեսությունների ստացած վարկերի միջին գումարը 1 վարկառու տնտեսության հաշվով կազմել է 2.2 մլն. դրամ: Վարկերը ստացվել են թվով 4 բանկերից (Ինելկոբանկ, Արդշինիվեստբանկ, Ագբա-Ագրիկոլ բանկ, Յունիբանկ) և 3 վարկային կազմակերպություններից (Ֆարմկրեդիտ, Քարդ Կրեդիտ, Արեգակ): Վարկերի տոկոսադրույքները տատանվում են 10-24 %-ի սահմաններում: Հարցումների տվյալներով, ցածր տոկոսադրույքով վարկերը տրամադրվում են հիմնականում վարկային կազմակերպությունների, իսկ բարձր տոկոսադրույքով վարկերը՝ բանկերի կողմից: Այսպես, ամենացածր՝ մինչև 14 % տոկոսադրույքով 4 վարկերից 3-ը տրամադրվել են վարկային կազմակերպությունների կողմից, իսկ ամենաբարձր՝ 20-24 % տոկոսադրույքով 8 վարկերից 6-ը տրամադրվել են բանկերի կողմից: Մնացած վարկերի տոկոսադրույքները տատանվել են 14-20 % - ի սահմաններում:
16. Շահառուներից 18-ը ԳՖԿ վարկերից բացի, 2009 թ. հետո ստացել են նաև այլ վարկեր, որից 16-ը նորից ԳՖԿ-ից, իսկ կոնտրոլ խմբի 56 տնտեսություններից 26-ը վարկեր են ստացել այլ կազմակերպություններից:
17. Աղքատության վրա ծրագրի ազդեցությունը գնահատելու նպատակով հարցված տնտեսությունները խմբավորվել են ըստ 2013թ. ստացված կանխիկ եկամտի չափի:

Աղյուսակ 2. Տնտեսությունների խմբավորումն ըստ կանխիկ եկամտի

	Եկամտի խմբեր	Հարցվածներ		Խմբի միջինը
		n	%	մլն. դրամ
1	մինչև 1 մլն. դրամ	12	10,8	0.81
2	1-2 մլն. դրամ	43	38,7	2.07
3	2-5 մլն. դրամ	27	24,3	3.87
4	5-10 մլն. դրամ	17	15,3	6.37
5	10 մլն. և ավելի	12	10,8	22.62
	Ընդամենը	111	100,0	5.25

Հարցված տնտեսությունների կեսից ավելին գտնվում են տարեկան 1-5 մլն. դրամ կանխիկ եկամտի խմբում:

Հողօգտագործում

18. Մինչև ծրագիրը և ծրագրից հետո տվյալների համեմատությամբ, սեփական հողատարածքների միայն աննշան փոփոխություններ են արձանագրվել: Շահառու տնտեսություններում արձանագրվել է սեփական հողատարածքների աննշան աճ (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեփական հողատարածքներ, միջին 1 տնտեսության հաշվով, հա

	2009	2013	2013+,- 2009	2009	2013	2013+,- 2009
	Շահառուներ			Կոնտրոլ խումբ		
Վարելահող	1.96	1.98	+0.02	1.16	1.16	0
Պտղատու այգի	1.00	1.04	+0.04	1.28	1.28	0
Խաղողի այգի	0.92	1.00	+0.08	0.30	0.30	0
Խոտհարք	0.49	0.49	0	0.93	0.96	-0.03


19. Ըստ եկամտի խմբերի նույնպես հողատարածքների առանձնակի փոփոխություններ չեն արձանագրվել:

Աղյուսակ 4. Հողատարածքները ծրագրի առաջ և հետո, ըստ եկամտի խմբերի (1 տնտեսության հաշվով), հա

	Եկամտի խումբը	SS թիվը	Ընդամենը հարցում		շահառուներ		Կոնտրոլ խումբ	
			մինչև ծրագիրը	ծրագրից հետո	մինչև ծրագիրը	մինչև ծրագիրը	մինչև ծրագիրը	մինչև ծրագիրը
1	մինչև 1 մլն. դրամ	12	1,08	1,08	1.50	1.50	0.99	0.99
2	1-2 մլն. դրամ	43	1,52	1,51	2.03	2.03	1.22	1.20
3	2-5 մլն. դրամ	27	1,64	1,62	2.07	2.04	0.91	0.91
4	5-10 մլն. դրամ	17	2,46	2,46	2.14	2.14	3.21	3.21
5	10 մլն. և ավելի	12	7,08	7,54	4.40	4.74	12.43	12.43
6	Ընդամենը	111	2,26	2,25	2.39	2.39	2.12	2.11

Փոքր բացառություն է կազմում միայն ամենահարուստ 5-րդ խումբը, որտեղ միջին տնտեսության հաշվով մոտ 0.5 հա-ով ավելացել է գյուղատնտեսական հողերի տարածքը: Աղյուսակ 4-ի տվյալները վկայում են, որ տնտեսության կանխիկ եկամուտն ուղղակիորեն կախված է տնտեսության հողատարածքի չափից:

20. Շահառու տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի 1 հա-ի



բերքատվությունն, ինչպես երևում է Նկար 2-ից, 2013թ. բացառությամբ բանջարանոցային մշակաբույսերի բարձր է ընդամենը հարցման տվյալներից: Հացահատիկի բերքատվության մակարդակները հավասար են: Սակայն, այստեղ անհրաժեշտ է նշել, որ պատկերը գրեթե նույնն էր նաև մինչև ՇՀՖԾ իրականացումը՝ 2009թ. դրությամբ:

Աղյուսակ 5. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, տ/հա

		Ընդամենը հարցում	Շահառուներ	Բուսաբուծության վարկառուներ	Այգեգործության վարկառուներ
		n=111	n=55	n=14	n=16
Հացահատիկ	WOP	2.1	2.0	4.4	2.1
	WP	2.2	2.2	4.6	2.6
	WP+,- WOP	+0.1	+0.2	+0.2	+0.5
Կարտոֆիլ	WOP	36.3	52.9		
	WP	30.1	44.2		
	WP+,- WOP	-6.2	-8.7		
Բանջարեղեն	WOP	13.9	8.9	10.8	16.0
	WP	15.5	10.0	12.6	15.7
	WP+,-	+1.6	+1.1	+1.8	-0.3

	WOP				
Պտուղ	WOP	10.5	13.2	11.9	14.4
	WP	7.9	10.6	7.4	11.6
	WP+,- WOP	-2.6	-2.6	-4.5	-2.8
Խաղող	WOP	12.8	13.8	8.3	14.7
	WP	11.9	12.9	4.5	14.3
	WP+,- WOP	-0.9	-0.9	-3.8	-0.4
Կերեր	WOP	6.3	10.6	10.0	9.1
	WP	6.3	11.2	10.0	9.4
	WP+,- WOP	0	+0.6	0	+0.3

Բացի ընդամենը հարցման և շահառուների խմբերից, բերված աղյուսակում դիտարկվել են բուսաբուծության և այգեգործության նպատակներով ՁՖԿ-ից վարկավորված տնտեսությունների խմբերի գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության փոփոխությունների տվյալները:

21. Ինչպես երևում է Աղյուսակ 5-ի տվյալներից, մինչև ծրագիրը և ծրագրից հետո, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության փոփոխություններն, ընդհանուր առմամբ նույնն են ընտրանքային համակցության բոլոր խմբերի համար: Նույնիսկ այգեգործական և բուսաբուծական նպատակներով վարկառու տնտեսություններում վիճակն ավելի լավ չի: Նման իրավիճակը կարող է պայմանավորված լինել. ա) համեմատության համար ընտրված բազային տարում՝ 2009թ. (մինչև ծրագիրը), գյուղատնտեսական տարին ավելի բարենպաստ է եղել քան 2013թ. (ծրագրից հետո) և բ) հարցման ժամանակ «հիշողության օգտագործման» մեթոդի կիրառման հետևանք է, հարցվողը չհիշելով 4 տարվա վաղեմություն ունեցող տվյալները, կրկնում է ընթացիկ տարվա տվյալները:
22. Համաձայն ՀՀ ԱԿԾ տվյալների⁵ 2009թ. համեմատությամբ 2012թ-ին գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունները, բացառությամբ պտղի, ավելացել են: Իսկ պտղի բերքատվության նվազումը բարձր չէ: Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների, 2013թ. նույնպես գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության մակարդակի աճ է արձանագրվել:
23. Առանձնակի, ուշադրության արժանի փոփոխություններ չեն արձանագրվել նաև գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքում:

Աղյուսակ 6. Ցանքատարածությունների կառուցվածքն, ըստ դիտարկման խմբերի, %

	Ընդամենը հարցում		Ընդամենը շահառուներ		Բուսաբուծ. զարգացման վարկառուներ		Այգեգործության զարգացման վարկառուներ	
	WOP	WP	WOP	WP	WOP	WP	WOP	WP
Հացահատիկ	38,7	36,7	56,3	53,6	73,2	66,9	6,2	6,2
Կարտոֆիլ	3,1	3,6	1,9	2,6	0,0	0,0	0,0	0,0
Բանջարեղեն	5,8	6,3	4,6	5,4	7,3	13,1	3,2	3,2

⁵ -«ՏՀ» ԿՊՍԸՄ ԳՃՆԱԻՐԻՑՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՑԻ, 2012Տ. ՆԱԾԻՐՈՒՄԻ ԱՎԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՏՎՈՒՄ»:

Պտուղ	33,0	32,6	21,9	22,0	7,2	7,8	61,5	61,5
Խաղող	6,1	5,8	8,1	8,1	4,6	4,6	21,3	21,3
Կերեր	13,2	15,0	7,2	8,3	7,7	7,6	7,8	7,8
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Համեմատաբար միակ աչքի ընկնող փոփոխությունը, բուսաբուծության զարգացման վարկառուների խմբում բանջարեղենի ցանքատարածությունների տեսակարար կշռի մոտ 6 տոկոսային կետով աճն է հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների հաշվին:

24. Մինչև ծրագիրը և ծրագրից հետո ժամանակահատվածում շահառու տնտեսություններում գրեթե բոլոր մշակաբույսերի համախառն բերքի ավելացում է արձանագրվել, այն դեպքում, երբ կոնտրոլ խմբի տնտեսություններում գրեթե բոլոր մշակաբույսերի համախառն բերքի նվազում է արձանագրվել:

Աղյուսակ 7. Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը, 1 միջին տնտեսության հաշվով, տ/հա

	Ընդամենը հարցում		շահառուներ		կոնտրոլ խումբ	
	WOP	WP	WOP	WP	WOP	WP
Հացահատիկ	4.72	4.73	5.44	5.42	2.66	2.65
Կարտոֆիլ	6.05	6.00	6.22	8.10	5.87	4.00
Բանջարեղեն	3.00	3.70	1.80	2.30	4.40	5.20
Պտուղ	10.20	8.20	9.80	8.80	10.60	7.60
Խաղող	8.00	9.00	12.70	14.40	2.40	1.90
Կերեր	6.70	7.30	7.30	8.40	6.10	6.10

25. Ընդամենը հարցման և կոնտրոլ խմբի տնտեսություններում, դիտարկվող ժամանակահատվածում բուսաբուծական մթերքների ապրանքայնության մակարդակի նվազում է արձանագրվել (Աղյուսակ 8): Ի տարբերություն վերջիններիս, շահառուների խմբում ապրանքայնության աճ է նկատվում: Այս խմբի տնտեսություններում, բացի հացահատիկից և պտղից, որոնց ապրանքայնության մակարդակում աննշան նվազում կա, մյուս մթերքների ապրանքայնության աճը նկատելի է: Բանջարեղենի ապրանքայնության մակարդակը շահառուների խմբում ավելացել է 9.1, իսկ կարտոֆիլինը՝ 1.4 տոկոսով, այն դեպքում, երբ կոնտրոլ խմբի տնտեսություններում բանջարեղենի ապրանքայնությունն ավելացել է միայն 0.9 տոկոսով, իսկ կարտոֆիլի ապրանքայնությունը նվազել է 9.6 տոկոսով:

Աղյուսակ 8. Բուսաբուծական մթերքների օգտագործումը

	Ապրանքայնություն, %			օգտագործվել է տնտեսությունում, 1 տնտ.հաշվով, տոննա		
	WOP	WP	WP+,-WOP	WOP	WP	WP+,-WOP
	Ընդամենը հարցում					
Հացահատիկ	65,5	64,7	-0,8	1,63	1,72	0,09
Կարտոֆիլ	82,8	80,6	-2,3	1,07	1,14	0,07

Բանջարեղեն	83,4	86,6	3,2	0,45	0,44	-0,01
Պտուղ	95,2	94,5	-0,7	0,48	0,45	-0,03
Խաղող	95,9	96,4	0,5	0,35	0,37	0,02
Կերեր	16,9	15,5	-1,5	6,18	7,21	1,03
Շահառուներ						
Հացահատիկ	66,0	65,6	-0,5	1,78	1,87	0,09
Կարտոֆիլ	83,3	84,7	1,4	1,09	1,17	0,08
Բանջարեղեն	72,1	81,2	9,1	0,43	0,38	-0,05
Պտուղ	95,5	95,4	-0,1	0,43	0,4	-0,03
Խաղող	96,7	97,3	0,6	0,46	0,44	-0,02
Կերեր	0,0	2,1	2,1	6,79	8,18	1,39
Կոնտրոլ խումբ						
Հացահատիկ	62,7	59,5	-3,1	1,12	1,21	0,09
Կարտոֆիլ	82,3	72,8	-9,6	1,04	1,1	0,06
Բանջարեղեն	88,4	89,3	0,9	0,48	0,5	0,02
Պտուղ	94,9	93,5	-1,4	0,54	0,49	-0,05
Խաղող	90,4	87,5	-2,9	0,23	0,28	0,05
Կերեր	38,1	35,2	-2,9	5,23	5,69	0,46

26. Բուսաբուծական մթերքների ներտնտեսային կարիքների համար օգտագործման մակարդակը, դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի փոփոխություններ չի կրել և գրեթե նույնն է շահառու և կոնտրոլ խմբի տնտեսությունների համար: Սակայն մթերքների սեփական կարիքների օգտագործումն ըստ տնտեսությունների եկամտի խմբերի դիտարկելիս փոփոխություններ նկատվում են (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Սեփական արտադրության գյուղմթերքների օգտագործումը ներտնտեսային կարիքների համար

	Եկամտի խումբը	WP +,- WOP					
		Հացահատիկ	Կարտոֆիլ	Բանջարեղեն	Պտուղ	Խաղող	Կերեր
		կգ	կգ	կգ	կգ	կգ	կգ
1	մինչև 1 մլն. դրամ	0	0	0	0	0	-3000
2	1-2 մլն. դրամ	133	-71	-65	22	150	2200
3	2-5 մլն. դրամ	172	340	-66	-75	300	0
4	5-10 մլն. դրամ	260	60	-19	-81	-75	204
5	10 մլն. և ավելի	-567	0	0	145	-225	3250
Ընդամենը		87	79	-46	-25	-16	1392

27. Ամենաաղքատ տնտեսություններում ներտնտեսային կարիքների համար օգտագործված սեփական արտադրության գյուղատնտեսական մթերքների մակարդակը մինչև ծրագիրը և ծրագրից հետո մնացել է նույն մակարդակի վրա: Այս տնտեսություններում միջին հաշվով 3 տոննայով նվազել է անասնակերերի օգտագործումը, որը կարող է պայմանավորված լինել անասնապահությունը կրճատելու որոշմամբ:

28. Եկամտի միջին խմբերում ավելանում է հացահատիկի և կարտոֆիլի ներտնտեսային կարիքների համար օգտագործումը: Եթե հաշվի առնենք, այն փաստը, որ, ինչես նվազ վերևում, ցանքատարածությունների փոփոխություններ հիմնականում չեն արձանագրվել (սերմի համար օգտագործվող ծավալները չեն ավելացել), որը նշանակում է, որ այս տնտեսություններն ավելացրել են սննդի համար հացի և կարտոֆիլի օգտագործումը:

Տնտեսությունների ամենահարուստների խմբում կրճատվել են անասնապահության համար ծախսվող հացահատիկի ծավալները՝ փոխարենը ավելացնելով կերերի ծավալները:

29. ԳՖԿ վարկերը արդյունավետության բավականին բարձր մակարդակ են ապահովում բուսաբուծության ճյուղում: ԳՖԿ շահառու տնտեսություններում, որոնք վարկեր են ստացել բուսաբուծության և այդ թվում այգեգործության զարգացման նպատակով, կարողացել են ավելացնել առանց այդ էլ բավականին բարձր (6.3) եկամուտ/ծախս գործակիցը: Դիտարկվող ժամանակահատվածում Կոնտրոլ խմբի տնտեսություններում այդ գործակիցի զգալի անկում է արձանագրվել, 3.3-ից՝ 1.9 (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Բուսաբուծական (այդ թվում այգեգործական) տնտեսությունների տնտեսական արդյունավետության գնահատում, միջին 1 տնտեսության հաշվով
\$1= 405

Վարկի գումարը, USD	Չափի միավորը	Շահառուներ		Կոնտրոլ խումբ	
		Առանց ծրագրի	Ծրագրի հետ	2009	2013
Հասույթ բուսաբուծական մթերքների վաճառքից	USD	8990	13662	3153	3027
Ստացվել է հասույթ	USD	8990	13662	3153	3027
Ընդամենը ծախս	USD	1235	1592	730	1034
Զուտ հասույթ	USD	7756	12070	2423	1993
Հասույթի ավելացում ծրագրի շնորհիվ	USD		4314		-430
Եկամուտ/ծախս գործակից		6.3	7.6	3.3	1.9

ԳՖԿ բուսաբուծական վարկառու տնտեսությունների համար գործունեության ֆինանսական վերլուծությունը հետագա 20 տարիների կտրվածքով բերված է Հավելված 3-ում:

Անասնապահություն

30. Ընտրանքային համակցության 111 գյուղացիական տնտեսությունների 71-ն են զբաղվում անասնապահությամբ: Անասնապահությամբ չզբաղվող 40 տնտեսությունները հավասար՝ 20-ական բաժանվել են շահառուների և կոնտրոլ խմբերում:

31. Դիտարկվող ժամանակահատվածում ընդամենը ընտրանքային համակցության բոլոր խմբերի տնտեսություններում գրանցվել է անասնազվխաքանակի աճ (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Անասունների զվխաքանակը, միջին 1 տնտեսության հաշվով, գլուխ

	Ընդամենը հարցում		Կոնտրոլ խումբ		Շահառուներ		Անասնապահության զարգացման վարկառուներ	
	WOP	WP	WOP	WP	WOP	WP	WOP	WP
խ.ե. անասուն	8,3	9,5	9,6	9,8	7,3	9,2	8,4	10,7

կով	3,9	4,9	3,7	4,1	4,1	5,5	4,8	5,9
խոզ	5,4	8,7	3,2	3,7	6,9	10,8	7,3	9,9
ոչխար	20,5	34,2	27,3	54,1	15,9	21,6	13,4	16,9

32. Անասնազխաքանակի աճն ավելի ակնառու է շահառուների և այդ թվում անասնապահության վարկառու տնտեսություններում:

Աղյուսակ 12. Անասնազխաքանակի աճը

	Ընդամենը հարցում	Կոնտրոլ խումբ	Շահառուներ	Անասնապահության զարգացման վարկառուներ
խ.ե. անասուն	1,2	0,2	1,9	2,3
կով	1	0,4	1,4	1,1
խոզ	3,3	0,5	3,9	2,6
ոչխար	13,7	26,8	5,7	3,5

Մինչև ծրագիրը և ծրագրից հետո ընկած ժամանակահատվածում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի ամենաբարձր աճն արձանագրվել է անասնապահության վարկառու տնտեսություններում, որոնք, սակայն միևնույն ժամանակ, կովերի գլխաքանակի աճի մակարդակով գտնվում է ընդամենը հարցման մակարդակին: Այստեղից կարելի է եզրահանգել, որ անասնապահության զարգացման վարկերի հիմնական ուղղությունը մասյին տավարաբուծությունն է: Ի տարբերություն կոնտրոլ խմբի տնտեսությունների, որոնք, ինչպես երևում է Աղյուսակ 12-ից նախընտրել են ոչխարաբուծության զարգացումը, ՉՖԿ շահառու տնտեսություններում ներդրումներն ուղղվում են տավարաբուծության և խոզաբուծության զարգացմանը: Այսպիսով, ֆինանսական միջոցների առկայության դեպքում տնտեսությունները զարգացնում են տավարաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ոչխարաբուծությունը, ինչից կարելի է հետևություն անել, որ ըստ գյուղացիական տնտեսությունների տնտեսապես ակտիվ խմբի (վարկառուներ) տավարաբուծությունն ու խոզաբուծությունը ավելի եկամտաբեր են քան ոչխարաբուծությունը:

Աղյուսակ 13. Անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճը, 1 միջին տնտեսության հաշվով, կգ

	շահառուներ	անասնապահական շահառուներ	կոնտրոլ խումբ
	WP +, - WOP	WP +, - WOP	WP +, - WOP
Տավարի միս	+13	+128	+119
խոզի միս	+387	+286	-16
Ոչխարի միս	+153	+3	+250
Կաթ	+2035	+1469	+846
Բուրդ	+2	+2	+35

Բացի ոչխարի մսի և բրդի արտադրության ծավալների աճի, մյուս բոլոր անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճով ՉՖԿ շահառու տնտեսությունները գերազանցում են կոնտրոլ խմբի տնտեսություններին: Դիտարկվող ժամանակահատվածում կոնտրոլ խմբի տնտեսություններում 1 կովի միջին կաթնատվությունը աճել է 104 լիտրով, այն դեպքում, երբ շահառու տնտեսություններում այդ աճը կազմում է 175 լիտր:

33. Անասնապահական մթերքների ապրանքայնության աճի մակարդակով նույնպես ԳՖԿ շահառու տնտեսությունները գերազանցում են կոնտրոլ խմբի տնտեսություններին: Շահառուների խմբում աննշան նվազել է միայն տավարի մսի, իսկ անասնապահության շահառուների խմբում՝ միայն ոչխարի մսի ապրանքայնության մակարդակը:

Աղյուսակ 14. Անասնապահական մթերքների ապրանքայնությունը, %

	Շահառուներ			Անասնապահության զարգացման վարկառուներ			Կոնտրոլ խումբ		
	WOP	WP	WP +,- WOP	WOP	WP	WP +,- WOP	WOP	WP	WP +,- WOP
Տավարի միս	92,0	91,1	-0,9	90,4	90,4	0,0	95,8	94,9	-0,9
Խոզի միս	93,2	95,7	2,5	94,8	97,2	2,4	80,3	78,5	-1,8
Ոչխարի միս	83,6	91,0	7,5	53,0	46,6	-6,4	55,5	59,2	3,7
Կաթ	79,5	86,3	6,7	80,1	86,1	6,0	79,2	50,9	-28,3
Բուրդ	72,2	73,0	0,8	63,8	66,5	2,7	82,4	90,7	8,3

Նախորդ կետում եզրահանգում արվեց, որ անասնապահական վարկառու տնտեսություններում հավանաբար անցում են կատարել մսային տավարաբուծությանը, սակայն Աղյուսակ 13-ի տվյալներով այս տնտեսություններում տավարի մսի ապրանքայնության աճ չի գրանցվել: Մնում է եզրակացնել, որ մսային տավարաբուծության զարգացման (ցուլիկների ծեռք բերում և բտում) այդ ներդրումների հիմնական մասը վարկառուները կատարել են վերջին 2012-2013 թվականներին և դեռ արդյունքներ չեն ստացել: Վերջին 2 արդյուսակների տվյալների համադրումից ևս մեկ հետաքրքիր փաստ: Կոնտրոլ խմբի տնտեսություններում, որտեղ ոչխարների գլխաքանակի աճը 1 տնտեսության հաշվով ամենաբարձրն էր (26,8 գլուխ), ոչխարի մսի ապրանքայնության մակարդակով (3.7 %) զիջում է շահառու խմբի տնտեսություններին (7.5 %): Հետաքրքիր է, որ կոնտրոլ խմբի տնտեսություններում բրդի ապրանքայնության ամենաբարձր մակարդակն է արձանագրվել, այն դեպքում, երբ հանրապետությունում բրդի պահանջարկը զգալիորեն զիջում է առաջարկին:

34. Անասնապահական մթերքների ապրանքայնության աճին զուգահեռ, շահառու տնտեսությունները, սեփական արտադրության անասնապահական մթերքների ներտնտեսային կարիքների համար օգտագործման մակարդակի աճով գրեթե չեն զիջում կոնտրոլ խմբի տնտեսություններին:

Աղյուսակ 15. Սեփական արտադրության անասնապահական մթերքների ներտնտեսային կարիքների համար օգտագործումը

	Եկամտի խումբը	WOP +,- WP				
		Տավարի միս	Խոզի միս	Ոչխարի միս	Կաթ	Բուրդ
		կգ	կգ	կգ	կգ	կգ
1	Շահառուներ	8.6	9.5	-7.7	-25.5	1.7
2	Անասնապահության զարգացման վարկառուներ	13.4	0	5.3	-84.4	1.5
3	Կոնտրոլ խումբ	10.6	13.7	117.2	194.5	2.5

35. Գյուղմթերքների վերամշակում: Դիտարկվող ժամանակահատվածում ընդամենը հարցման տվյալներով գյուղմթերքների վերամշակման ծավալների ավելացում է գրանցվել: Ընդ որում, մինչև ծրագիրը և ծրագրից հետո ժամանակահատվածում, վերամշակման ծավալների աճը ԳՖԿ շահառուների խմբում գերազանցում է կոնտրոլ խմբում գրանցված աճին:

Աղյուսակ 16. Գյուղմթերքների վերամշակման ծավալների ավելացում, 1 տնտեսության հաշվով, կգ

	Վերամշակման ծավալի աճ WP +,- WOP		շահառու +,- կոնտրոլ խումբ
	շահառու	կոնտրոլ	
հաց	+64	+34	+30
պահածո	+102	+26	+75
մսամթերք	+303	+15	+288
կաթնամթերք	+122	+84	+38
ոգելից	+80	+3	+77

Հարցման տվյալներով, վերամշակված արտադրանքներից միայն մրգի և բանջարեղենի պահածոների ու մսամթերքների դեպքում է գրանցվել վաճառքի ծավալների փոքր աճ: Հաշվի առնելով, որ վերամշակված արտադրանքի հիմնական մասը օգտագործվում է տնտեսությունում, կարելի է եզրակացնել, որ շահառուների տնտեսություններում սննդամթերքի հասանելիության մակարդակի զգալի աճ է գրանցվել:

36. Անասնապահական շահառու տնտեսություններում, ԳՖԿ վարկից հետո ավելի քան 30 %-ով ավելացել է եկամուտ/ծախս գործակիցը, այն դեպքում, երբ կոնտրոլ խմբի տնտեսություններում, դիտարկվող ժամանակահատվածում, այդ գործակիցը մնացել է նույն մակարդակին:

Աղյուսակ 17. Անասնապահական տնտեսությունների տնտեսական արդյունավետության գնահատում, միջին 1 տնտեսության հաշվով \$1=405

Վարկի գումարը	USD	4,212		2,595	
		Շահառուներ		Կոնտրոլ խումբ	
	Չափի միավորը	Առանց ծրագրի	Ծրագրի հետ	2009	2013
Հասույթ անասնապահական մթերքների վաճառքից	USD	1541	2122	1276	1661
Հասույթ կենդանի անասունների վաճառքից	USD	413	436	311	430
Ստացվել է հասույթ	USD	1954	2559	1587	2090
Ընդամենը անասնապահության ծախսեր	USD	862	1027	1244	2334
Ընդամենը ծախս	USD	862	1027	1244	2334
Զուտ Հասույթ	USD	1092	1532	343	-244

Հասույթի ավելացում ծրագրի շնորհիվ	USD		439			-587.3
Եկամուտ/ծախս գործակից		1.3	1.5		0.3	-0.1

Աղյուսակ 17-ի տվյալները վկայում են, որ շահառուների և կոնտրոլ խմբի տնտեսություններում մինչև ծրագիրը և հետո ժամանակահատվածում, անասնապահությունից ստացված հասույթի աճի մակարդակը նույնն է և եկամուտ/ծախս գործակցի աճը շահառուների մոտ հիմնականում պայմանավորված է ծախսերի կրճատմամբ: Շահառու տնտեսություններն, ի տարբերություն կոնտրոլ խմբի տնտեսությունների, հասույթի նույն ավելացումը կարողացել են ապահովել ավելի քիչ ծախսերով: Սակայն, միևնույն ժամանակ, անասնապահական շահառու տնտեսությունների գործունեության ֆինանսական վերլուծությունը (Հավելված 4) ցույց է տալիս, որ նման իրավիճակի պահպանումը, հետագա 20 տարիների առումով՝ անարդյունավետ է:

Եկամուտներ

37. Հարցված շահառու միջին տնտեսությունում դիտարկվող ժամանակահատվածում գրանցվել է զուտ կանխիկ եկամտի աճ՝ 2.13 մլն. դրամի չափով: Նույն ժամանակահատվածում կոնտրոլ խմբի տնտեսություններում կանխիկ զուտ եկամուտը միջին 1 տնտեսության հաշվով նվազել է 260 հազ. դրամի չափով:

Աղյուսակ 18. Միջին գյուղացիական տնտեսության կանխիկ եկամուտը, մլն.դրամ

	Շահառուներ			Կոնտրոլ խումբ		
	WOP	WP	WP +,- WOP	WOP	WP	WP +,- WOP
Աշխատավարձ, թոշակ, այլ տրանսֆերտներ	1,02	1,53	0,51	1,05	1,26	0,21
Եկամուտ գյուղատնտեսական գործունեությունից	3,45	4,95	1,5	2,14	2,24	0,10
Ընդամենը ծախսեր գյուղատնտեսությունում	0.83	1.01	0.18	0.73	1.31	0.58
Զուտ եկամուտ գյուղատնտեսական գործունեությունից	2.62	3.94	1.32	1.41	0.93	-0.48
Եկամուտ ոչ գյուղատնտեսական գործունեությունից	0,16	0,46	0,30	0,07	0,08	0,01
Ընդամենը զուտ կանխիկ եկամուտ	3.80	5.93	2,13	2.53	2.27	-0.26

Հատկանշական է, որ շահառու տնտեսությունների զուտ կանխիկ եկամտի աճի 62 %-ը ստացվել է գյուղատնտեսական գործունեությունից:

38. Չնայած շահառուների եկամուտների զգալի ավելացմանը, այդ ավելացումը հավասարաչափ չի բաշխվել ըստ տնտեսությունների եկամտային խմբերի:

Աղյուսակ 19. Ստացված տարեկան կանխիկ եկամուտը,
ըստ եկամտային խմբերի, մլն.դրամ

Եկամտի խումբը	WOP	WP	WP +,- WOP	WOP	WP	WP +,- WOP
	Շահառուներ			Կոնտրոլ խումբ		
մինչև 1 մլն. դրամ	1.19	0.97	-0.22	0.81	0.78	-0.03
1-2 մլն. դրամ	1.65	1.97	0.32	1.59	2.12	0.53
2-5 մլն. դրամ	3.57	3.84	0.27	3.08	3.94	0.86
5-10 մլն. դրամ	5.31	6.41	1.1	6.47	6.26	-0.21
10 մլն. և ավելի	12.69	25.82	13.13	16.96	16.21	-0.75
Ընդամենը	4.63	6.95	2.32	3.25	3.58	0.33

Աղյուսակ 19-ի տվյալներից երևում է, որ շահառուների ամենաաղքատ խմբում ծրագրից հետո արձանագրվել է եկամտի նվազում, 1 միջին տնտեսության հաշվով 0.22 մլն. դրամի չափով: Չնայած եկամտի հաջորդ 2 խմբերում ծրագրից առաջ և հետո ժամանակահատվածում առկա է եկամտի որոշակի աճ, բայց այդ աճը զիջում է կոնտրոլ խմբի միջին տնտեսության ստացած աճին: ԳՖԿ վարկերն էֆեկտիվության բարձր մակարդակ են ապահովել եկամտի վերջին՝ «հարուստների» խմբում, որտեղ եկամուտը մինչ ծրագիրը ժամանակի համեմատությամբ կրկնապատկվել է: Կոնտրոլ խմբի տնտեսությունների եկամտային վերջին 2 «հարուստների» խմբերի եկամուտները 2009թ. համեմատությամբ նվազել են:

39. Ընտանիքի համար ամսվա ընթացքում կատարված ծախսերի փոփոխությունները հիմնականում համապատասխանում են եկամտի ստացման փոփոխություններին: Շահառուների աղքատ խմբերում ծրագրից հետո ծախսերն ավելացել են, սակայն զիջում են կոնտրոլ խմբի աղքատ տնտեսությունների ծախսերի աճին:

Աղյուսակ 20. Ընտանիքի միջին ամսական ծախսը, հազ. դրամ

Եկամտի խումբը	WOP	WP	WP +,- WOP	WOP	WP	WP +,- WOP
	Շահառուներ			Կոնտրոլ խումբ		
մինչև 1 մլն. դրամ	75,0	100,0	25,0	104,0	135,0	31,0
1-2 մլն. դրամ	128,8	143,8	15,1	121,1	148,5	27,4
2-5 մլն. դրամ	155,3	196,5	41,2	104,0	134,0	30,0
5-10 մլն. դրամ	149,2	192,5	43,3	170,0	270,0	100,0
10 մլն. և ավելի	203,8	246,3	42,5	137,5	162,5	25,0
Ընդամենը	150,4	184,0	33,7	120,5	155,4	34,8

Զբաղվածություն

40. Շահառու տնտեսությունների եկամտի աճը նպաստել է տնտեսությունների ընդլայնմանը, որն իր հերթին հանգեցրել է նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Աղյուսակ 21. Զբաղվածների թիվը, միջին 1 տնտեսության հաշվով

	Մշտական աշխատանք			Ժամանակավոր աշխատանք		
	WOP	WP	WP +,- WOP	WOP	WP	WP +,- WOP

	Շահառուներ					
Տնտեսության անդամներ	2.58	2.65	0.07	1.95	1.95	0
Ընկերներ և բարեկամներ	2.50	2.11	-0.39	2.50	2.50	0
Վարձու աշխատողներ	3.43	4.25	0.82	3.71	6.43	2.72
	Կոնտրոլ խումբ					
Տնտեսության անդամներ	2.59	2.61	0.02	2.10	2.14	0.04
Ընկերներ և բարեկամներ	1.50	2.00	0.50	1.86	2.29	0.43
Վարձու աշխատողներ	4.00	3.00	-1.00	3.25	3.50	0.25

Շահառու տնտեսությունները, ինչպես երևում է Աղյուսակ 21-ից, ավելացնում են վարձու աշխատանքի բաժինը, կրճատելով տնտեսության անդամների և ընկեր-բարեկամների աշխատանքը: Ճիշտ հակառակ վարքագիծն են դրսևորել կոնտրոլ խմբի տնտեսությունները, որոնք շարունակում են հույսը դնել ընտանիքի անդամների և ընկեր-բարեկամների վրա:

41. Շահառու միջին տնտեսությունում, մինչև ծրագիրը և հետո ժամանակահատվածում ավելացած մշտական և ժամանակավոր աշխատատեղերի թիվը կազմել է 3.54 (0,82+2,72), իսկ կոնտրոլ խմբի տնտեսություններում՝ այն նվազել է 0.75 (-1+0.25) աշխատատեղով: Այսպիսով, ԳՖԿ-ի ծրագրի շնորհիվ, շահառու միջին տնտեսությունում աշխատատեղերի զուտ աճը կազմել է 4.29: ԳՖԿ շահառու տնտեսությունների ընդհանուր թիվը, բացի ձկնաբուծական, գինեգործական, ջերմոցային և կաթնամթերքի արտադրության ձեռնարկություններից (այս ձեռնարկությունների համար առանձին հաշվարկ կկատարվի) կազմում է 724, ինչը թույլ է տալիս հաշվարկել, որ ԳՖԿ ծրագրի շնորհիվ հանրապետության գյուղական վայրերում 3106 վճարվող նոր աշխատատեղ է ստեղծվել:
42. Ձկնաբուծական, գինեգործական, ջերմոցային և կաթնամթերքի ձեռնարկությունների համար 46-71 պարբերություններում կատարված հաշվարկներով ավելացած աշխատատեղերի թիվը կազմում է 166: Այսպիսով, ԳՖԿ կողմից իրականացված ծրագրերի շնորհիվ, հանրապետության գյուղատնտեսությունում ստեղծվել են նոր 3272 աշխատատեղ:

Կանայք

43. Գյուղացիական տնտեսությունների հարցաթերթում հատուկ բաժին էր նվիրվել կանանց, որի հարցերին պատասխանել են գյուղացիական տնտեսությունների միայն կին անդամները: Հարցերին պատասխանած կանանցից 96-ը ամուսնացած են, 10-ը՝ չամուսնացած և 5-ը՝ այրի:
44. Հարցված կանանցից 55-ը հայտարարել են, որ գյուղացիական տնտեսությանը վերաբերող կարևոր որոշումները ընդունում են տնտեսության գլխավորի՝ ամուսնու հետ միասին, իսկ 6-ը հայտարարել են, որ միանձնյա են ընդունում այդ որոշումները:
45. Հարցված կանանց 35.7 %-ը (շահառուների մոտ՝ 36.4%) ունեն հողի, 9.5 %-ը (7.3 %)՝ անասունների, 26.2 %-ը (32.7 %)՝ տան կամ այլ շինության և 5.6 %-ը (3.6 %) ունեն այլ անշարժ գույքի սեփականություն:
46. Հարցվածների 79.4 %-ը (շահառուների մոտ՝ 92.7%) աշխատում են տնտեսությունում, որի վրա ծախսում են իրենց ժամանակի մոտ կեսը: Նրանց 72.2 %-ը (շահառուների մոտ՝ 89.1 %) զբաղվում են տնտեսության գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ:
47. Կանանց 16.7 %-ը (շահառուների մոտ՝ 29.1 %) վերջին տարվա ընթացքում վարկ են վերցրել: Կանանց 11.1 %-ը (շահառուների մոտ՝ 5.5 %) դեմ են եղել, երբ իրենց ամուսինը որոշել է դիմել ԳՖԿ վարկի համար: Իսկ եթե դուք ցանկանաք վարկ վերցնել, Ձեր ամուսինը համաձայն կլինի հարցին, կանանց 56.3 %-ը (շահառուների մոտ՝ 78.2 %) դրական պատասխան են տվել, 20.6 %-ը (շահառուների մոտ՝ 14.5 %)՝ բացասական, իսկ կանանց 23.0 %-ը (շահառուների մոտ՝ 7.3 %) «զերադասել է լռել»:

Հետազոտության արդյունքներն ըստ ենթաուղղությունների

Ջերմոցային տնտեսություններ

48. 2009-2013թթ. ջերմոցային տնտեսություն վարելու նպատակով ՉՖԿ միջոցներից վարկեր են ստացել թվով 50 տնտեսավարող սուբյեկտներ: Ջերմոցային տնտեսությունների կողմից ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմում է 753,3 հազ. դոլար, 15.1 հազ. դոլար 1 տնտեսության հաշվով:
49. Հարցումներով հանրապետության 4 մարզերից ընտրվել են 14 ջերմոցային տնտեսություններ, որոնցից 10-ը ՉՖԿ շահառու և 4-ը ոչ շահառու ջերմոցային տնտեսություններ: Ոչ շահառու 4 ջերմոցային տնտեսությունները կազմել են կոնտրոլ խումբը:
50. Ջերմոցային տնտեսություններից 8-ը զբաղվում են բանջարեղենի, 4-ը ծաղիկի, 1-ը՝ սածիլի, իսկ 2-ը և բանջարեղենի և ծաղիկի մշակությամբ: Մինչև ծրագիրը շահառու միջին ջերմոցային տնտեսության ջերմոցների ընդհանուր տարածքը կազմում էր 1302 քառ. մետր, իսկ ծրագրից հետո՝ 1830 քառ. մետր: Ջերմոցների ծածկերը մեծամասամբ ապակյա են: Բանջարեղենի արտադրության միջին ջերմոցի տարեկան հզորությունը կազմում է 37 տոննա բանջարեղեն, իսկ ծաղիկ արտադրողինը՝ 42 հազ.հատ ծաղիկ: Ջերմոցների տաքացման հիմնական աղբյուրներն են բնական գազը և էլեկտրոէներգիան:
51. Շահառու ջերմոցներում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 ջերմոցի հաշվով ավելացել է 1.4-ով, այն դեպքում, երբ կոնտրոլ խմբի միջին ջերմոցում արձանագրվել է 0.2 աշխատատեղի կրճատում:

Աղյուսակ 22. Աշխատողների թիվը

	Ընդամենը աշխատողների թիվը		
	WOP	WP	WP+,- WOP
Շահառուներ	3,3	4,7	1,4
Կոնտրոլ խումբ	3,5	3,3	-0,2
Շահառու +,- Կոնտրոլ	-0,2	1,4	1,6

- Ջերմոցներում աշխատողների կին/տղամարդ հարաբերությունը միջին հաշվով կազմում է 70/30 և գրեթե նույն հարաբերությամբ էլ բաշխվում են ավելացած աշխատատեղերը:
52. Աղյուսակ 22-ից պարզվեց, որ ՉՖԿ ծրագրի շնորհիվ միջին 1 ջերմոցային տնտեսությունում աշխատատեղերի զուտ աճը կազմել է 1.6 աշխատատեղ: Այսպիսով, հաշվի առնելով ՉՖԿ կողմից ֆինանսավորված ջերմոցային տնտեսությունների թիվը՝ 50 կարող ենք հաշվարկել, որ շահառու ջերմոցային տնտեսություններում ՉՖԿ-ի ծրագրի շնորհիվ ստեղծվել է 80 նոր աշխատատեղ, որոնցից 56-ը բաժին են հասել կանանց:
53. Շահառու ջերմոցներում կոնտրոլ խմբի ջերմոցների համեմատությամբ բավականին բարձր տնտեսական արդյունավետության աճ է արձանագրվել (Աղյուսակ 23): Այսպես, շահառու ջերմոցներում, դիտարկվող ժամանակահատվածում զուտ հասույթն աճել է 5.8 անգամ, այն դեպքում, երբ կոնտրոլ խմբի ջերմոցներում այդ աճը կազմել է միայն 1.8 անգամ: Այդ ընթացքում շահառուների մոտ եկամուտ/ծախս հարաբերության գործակիցը 0.8-ից դարձել է 1.7, իսկ կոնտրոլ խմբում՝ 1.4-ից իջել և դարձել է 1: Կից ներկայացվում է նաև ջերմոցային ենթաուղղության ֆինանսական վերլուծության տվյալները հետագա 20 տարիների համար՝ Հավելված 5:

54. Ինչպես երևում է Աղյուսակ 23-ի տվյալներից, ԳՖԿ շահառու ջերմոցների նման առավելության հիմնական պատճառը, կոնտրոլ խմբի ջերմոցների համեմատությամբ երկի թե ավելի փոքր լինելն է: Հավանաբար փոքր ջերմոցային տնտեսությունները հայկական շուկայի համար ավելի ճկուն են և արդյունավետ: Համեմայնդեպս, շահառու ջերմոցային տնտեսություններում ավելի քիչ ծախսերով, ավելի բարձր եկամուտ է ստացվել:

Աղյուսակ 23. Ջերմոցային տնտեսությունների տնտեսական արդյունավետության գնահատում
1 միջին ջերմոցային տնտեսության հաշվով

\$1= 405

Վարկի գումարը

USD

19,296

37,778

Շահառուներ

Կոնտրոլ խումբ

		Արտադրություն				Արժեքային, USD			
		առանց ծրագրի	ծրագրի հետ	առանց ծրագրի	ծրագրի հետ	2009	2013	2009	2013
Վաճառվել է									
Բանջարեղեն	տոննա	20,38	29,72	10456,8	18007,4	51,0	74,3	26450,6	45388,9
Ծաղիկ	հազ.հատ	4,4	131,5	839,5	28395,1	70,25	223,75	17438,3	46419,8
Սաճիլ	հազ.հատ	0,7	0,5	86,4	61,7				
Ստացվել է հասույթ	USD			11382,7	46464,2			43888,9	91808,6
Ծախսեր									
Սաճիլների, սերմերի և տնկանյութի գնում	USD			1963,0	2871,6			5216,0	7518,5
Պարարտանյութերի գնում	USD			866,7	1140,7			2537,0	4827,2
Ջրօգտագործման վճար	USD			254,3	407,9			637,7	1391,4
Բուժանյութերի գնում	USD			464,2	661,7			1345,7	3506,2
Ջերմոցի ջեռուցման ծախսեր	USD			1051,9	7767,9			4481,5	16642,0
Աշխատավարձ	USD			340,7	1975,3			851,9	5555,6
Վերանորոգման ծախսեր	USD			703,7	1493,8			1821,0	4043,2
Այլ ծախսեր	USD			691,4	987,7			1728,4	2561,7
Ընդամենը ծախս	USD			6335,8	17306,7			18619,1	46045,7
Զուտ հասույթ	USD			5046,9	29157,5			25269,8	45763,0
Ծրագրի շնորհիվ հասույթի ավելացում	USD				24110,6				20493,2
Եկամուտ/ծախս գործակից				0,8	1,7			1,4	1,0

Գինեգործական ձեռնարկություններ

55. 2009-2013թթ. գինեգործության զարգացման նպատակով ԳՖԿ միջոցներից վարկեր են ստացել թվով 8 գինեգործական ձեռնարկություններ, որոնց ընդհանուր վարկային գումարը կազմում է 235.2.հազ. դոլար, 29.4 հազ. դոլար 1 գործարանի հաշվով:
56. Հարցումներով հանրապետության Արարատի և Վայոց Ձորի մարզերից ընտրվել են 4 գինեգործարաններ, որոնցից 1-ը տվյալներ չի ներկայացրել 2013թ. տնտեսական գործունեության վերաբերյալ, ինչի պատճառով դիտարկվել են միայն 3 գինեգործարանների տվյալները:
57. Գինեգործարաններից 2-ը ունեն 18 հա տարածքով խաղողի սեփական այգիներ, որից ստացված բերքը վերամշակվում է գործարանում: ԳՖԿ ծրագրի ընթացքում միջին գինեգործարանի գինու արտադրության հզորությունն ավելացել է 6.3 հազար լիտրով և կազմել 98.3 հազար լիտր: Գործարանները հունքն ամբողջությամբ գնում են անմիջապես արտադրողներից: Գինի չեն արտահանել, գինու ներքին շուկայում 18 %-ով կրճատվել են խանութներում վաճառվող գինու տեսակարար կշիռը, որն ավելացել է անմիջապես սպառողներին վաճառվող ծավալներում: Հարցված 3 գործարաններից 2-ը նախատեսում են ընդլայնել արտադրությունը, որի համար պատրաստվում են ներդնել 60 մլն. դրամ, որի համար դիմելու են ԳՖԿ:
58. Հարցված գինեգործարաններում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 գործարանի հաշվով ավելացել է 4-ով: Գինեգործության ենթաառարկայում կոնտրոլ խումբ չունենալու պատճառով, ծրագրի շնորհիվ զուտ աշխատատեղերի հաշվարկ հնարավոր չեղավ կատարել: Գինեգործարաններում աշխատողների կին/տղամարդ հարաբերությունը միջին հաշվով կազմում է 40/60 և գրեթե նույն հարաբերությամբ էլ բաշխվում են ավելացած աշխատատեղերը:
59. Այսպիսով, հաշվի առնելով ԳՖԿ կողմից ֆինանսավորված գինեգործարանների թիվը` 8, կարող ենք հաշվարկել, որ հանրապետության գինեգործության ենթաառարկայում, ԳՖԿ ծրագրի շնորհիվ ստեղծվել է 32 նոր աշխատատեղ, որոնցից 14-ը բաժին են հասել կանանց:
60. Գինեգործությունում, համեմատած ուսումնասիրված մյուս ենթաառարկային (ջերմոցային տնտեսություն, ձկնաբուծության) հետ տնտեսական արդյունավետության աճը շատ բարձր չէ: Այսպես, չնայած նրան, որ ԳՖԿ ծրագրի շնորհիվ միջին գինեգործարանի զուտ հասույթն աճել է ավելի քան 56 հազար ԱՄՆ դոլարով, եկամուտ/ծախս գործակցի աճը շատ բարձր չէ` 0.1-ից 0.3 (Աղյուսակ 24): Կից ներկայացվում է նաև գինեգործության ենթաառարկայի ֆինանսական վերլուծության տվյալները հետագա 20 տարիների համար` Հավելված 6:

Աղյուսակ 24. ԳՖԿ շահառու գինու գործարանների տնտեսական արդյունավետության
գնահատում
1 միջին գինեգործարանի հաշվով

Վարկի գումարը USD 58.436

\$1= 405

	չափի միավորը	Արտադրություն/ծախս		Ֆինանսական արժեքը, USD	
		առանց ծրագրի	ծրագրի հետ	առանց ծրագրի	ծրագրի հետ
Հասույթ գինու վաճառքից	հազ.լիտր	62.3	103.3	177,530.9	284,197.5
Ընդամենը հասույթ				177,530.9	284,197.5
Ծախսեր					
Խաղող, սեփական արտադրություն	տոննա	53.3	70.0		
Խաղողի գնում	տոննա	163.0	191.7	60,740.7	74,584.4
Գնված խաղողի 1 տոննայի գինը	USD/ton			372.6	389.1
Սեփական արտադրության խաղողի արժեքը	USD			19,874.3	27,239.5
Հումքի ներմուծում	տոննա	45.0	47.3	14,172.8	15,160.5
Գինու արտադրության ծախսեր	USD			71,055.8	99,065.0
Ընդամենը ծախսեր				165,843.6	216,049.4
Զուտ հասույթ	USD			11,687.2	68,148.1
Ծրագրի շնորհիվ հասույթի ավելացում	USD				56,460.9
Եկամուտ/ծախս գործակից				0.1	0.3

Ձկնաբուծական ձեռնարկություններ

61. 2009-2013թթ. ձկնաբուծության զարգացման նպատակով ԳՖԿ միջոցներից վարկեր են ստացել թվով 26 ձկնաբուծական ձեռնարկություններ, որոնց վարկերի ընդհանուր գումարը կազմում է 557.9 հազ. դոլար, 21.5 հազ. դոլար 1 ձեռնարկության հաշվով:
62. Հարցումներով հանրապետության 5 մարզերից ընտրվել են 5 ձկնաբուծական ձեռնարկություններ, որոնցից 1-ը («Կատրան» ՍՊԸ) հարցաթերթում բացակայել են ձեռնարկության տնտեսական գործունեության տվյալները (ձեռնարկությունը չի ներկայացրել), ինչի պատճառով այդ ձեռնարկության բոլոր տվյալները տվյալների բազայում անտեսվել են:
63. Ձկնաբուծական ձեռնարկությունները զբաղվում են ձկան, իսկ նրանցից մեկը՝ նաև ձկնկիթի արտադրությամբ: Հարցված 4 ձեռնարկություններից 3-ը չեն ունեցել ջրօգտագործման թույլտվություն և նրանցից 1-ն է միայն ԳՖԿ վարկից հետո ստացել այդ թույլտվությունը: Ձեռնարկությունները թանկության պատճառով չեն կիրառում ջրում թթվածնի ծավալը մեծացնող մեթոդներ: Ձկան կերը հիմնականում գնվում է: Ձեռնարկություններից միայն 1-ն է

- պատարաստվում ընդլայնել ձկնաբուծական տնտեսությունը, որի համար անհրաժեշտ 12 մլն. դրամը վարկի տեսքով վերցնելու է նույն վարկատու կազմակերպությունից (ԳՖԿ ծրագրերով):
64. Հարցված ձկնաբուծական ձեռնարկություններում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 ձեռնարկության հաշվով ավելացել է 1-ով: Ձկնաբուծության ենթաոլորտում կոնտրոլ խումբ չունենալու պատճառով, ծրագրի շնորհիվ զուտ աշխատատեղերի հաշվարկ հնարավոր չեղավ կատարել: Ձկնաբուծարաններում կանայք գրեթե չեն աշխատում:
65. Այսպիսով, հաշվի առնելով ԳՖԿ կողմից ֆինանսավորված ձկնաբուծարանների թիվը՝ 26, կարող ենք հաշվարկել, որ հանարապետության ձկնաբուծության ենթաոլորտում, ԳՖԿ ծրագրի շնորհիվ ստեղծվել է 26 նոր աշխատատեղ:
66. Ձկնաբուծությունը բավականին բարձր տնտեսական արդյունավետության մակարդակ ունի: ԳՖԿ ծրագրի արդյունքում, միջին ձեռնարկության հաշվով, տարեկան հասույթն աճել է մոտ 20 հազ. ԱՄՆ դոլարի չափով, իսկ եկամուտ/ծախս գործակիցն աճել է և մինչև ծրագիրը ժամանակի 2.9-ից հասել է 3.1-ի (Աղյուսակ 25): Կից ներկայացվում է նաև ձկնաբուծության ենթաոլորտի ֆինանսական վերլուծության տվյալները հետագա 20 տարիների համար՝ Հավելված 7:

Աղյուսակ 25. ԳՖԿ շահառու ձկնաբուծական ձեռնարկությունների տնտեսական արդյունավետության գնահատում 1 միջին ձեռնարկության հաշվով

Վարկի գումարը

USD

17,222

\$1= 405

	չափի միավորը	Արտադրություն		Արժեքային, USD	
		առանց ծրագրի	ծրագրի հետ	առանց ծրագրի	ծրագրի հետ
Արտադրվել է ձուկ	տոննա	7.325	12.250		
Վաճառվել է ձուկ	տոննա	7.250	11.875	35,185	60,926
Ստացվել է հասույթ	USD			35,185	60,926
Ծախսեր					
Մանրածկան և տնկանյութի գնում	USD			2,160	4,012
Ձկան կերի գնում	USD			2,346	3,086
Ջրօգտագործման վճար	USD			185	574
Բուժանյութեր	USD			463	586
Ջրում թթվածնի ծավալը մեծացնող մեթոդների ծախս	USD			1,543	2,160
Աշխատավարձ	USD			1,358	2,346
Վերանորոգման ծախսեր	USD			1,049	2,111
Այլ ծախսեր	USD			4	154
Ընդամենը ծախս	USD			9,109	15,031
Զուտ հասույթ	USD			26,076	45,895
Ծրագրի շնորհիվ հասույթի ավելացում	USD				19,819
Եկամուտ/ծախս գործակից				2.9	3.1

Կաթնամթերքի արտադրության ձեռնարկություններ

68. 2009-2013թթ. կաթի վերամշակման զարգացման նպատակով ԳՖԿ միջոցներից վարկեր են ստացել թվով 11 կաթի վերամշակման ձեռնարկություններ, որոնց վարկերի ընդհանուր գումարը կազմում է 541.4 հազ. դոլար, 49.2 հազ. դոլար 1 ձեռնարկության հաշվով:

69. Հարցումներով հանրապետության Արարատի և Գեղարքունիքի մարզերից ընտրվել են 4 կաթի վերամշակման ձեռնարկություններ:

70. Կաթի վերամշակման միջին ձեռնարկությունը մշակում է 11.8 հա սեփական և 5 հա վարձակալած հողատարածք, ունի 10 գլուխ կովեր, որի կաթը մշակում է ձեռնարկությունում: Միջին ձեռնարկության կաթի մթերման տարեկան հզորությունը մինչև ԳՖԿ ծրագիրը կազմել է 169 տոննա, իսկ ծրագրից հետո՝ 252 տոննա: Ծրագրի շնորհիվ, միջին ձեռնարկությունում կաթնամթերքի արտադրության ծավալները աճել են մոտ 40 տոննայով: Կաթնամթերքի իրացման ներքին շուկայում ծրագրից հետո ավելացել է սուպերմարկետներում վաճառվող ծավալները: Կաթնամթերքի բոլոր 4 ձեռնարկություններն էլ պատարաստվում են ընդլայնել իրենց տնտեսությունը, և նախատեսված միջին 153.5 մլն. դրամ ներդրումային գումարը, հայթհայթելու են վարկերի միջոցով: Նրանցից 3-ը պատրաստվում են նորից դիմել ԳՖԿ:
71. Հարցված կաթնամթերքի ձեռնարկություններում, ծրագրի իրականացման շնորհիվ աշխատատեղերի թիվը միջին 1 ձեռնարկության հաշվով ավելացել է 2.5-ով: Կաթի վերամշակման ենթաուղորտում կոնտրոլ խումբ չունենալու պատճառով, ծրագրի շնորհիվ զուտ աշխատատեղերի հաշվարկ հնարավոր չեղավ կատարել: Կաթի վերամշակման ձեռնարկություններում աշխատողների կին/տղամարդ հարաբերությունը միջին հաշվով կազմում է 40/60 և գրեթե նույն հարաբերությամբ էլ բաշխվում են ավելացած աշխատատեղերը:
72. Այսպիսով, հաշվի առնելով ԳՖԿ կողմից ֆինանսավորված կաթի վերամշակման ձեռնարկությունների թիվը՝ 11, կարող ենք հաշվարկել, որ հանարապետության կաթի վերամշակման ենթաուղորտում, ԳՖԿ ծրագրի շնորհիվ ստեղծվել է մոտ 28 նոր աշխատատեղ, որոնցից 11-ը բաժին են հասել կանանց:
73. Կաթի վերամշակումը տնտեսական արդյունավետության մակարդակով զիջում է, ուսումնասիրված մյուս ենթաուղորտներին: Ներդրումների հաշվին միջին ձեռնարկության տարեկան զուտ հասույթն ավելացել է մոտ 44 հազար ԱՄՆ դոլարով: Սակայն, միևնույն ժամանակ ծախսերի առաջանցիկ ավելացման արդյունքում ձեռնարկության եկամուտ/ծախս հարաբերությունը մինչև ծրագիրը՝ 0.51-ից նվազել և ծրագրից հետո կազմել է 0.48 (Աղյուսակ 26): Կից ներկայացվում է նաև կաթնամթերքի արտադրության ենթաուղորտի ֆինանսական վերլուծության տվյալները հետագա 20 տարիների համար՝ Հավելված 8:

Աղյուսակ 26. Կաթի վերամշակման ձեռնարկության տնտեսական արդյունավետության գնահատում 1 միջին ձեռնարկության հաշվով

Վարկի գումարը **USD** 90,123

\$1= 405

	Չափի միավորը	Արտադրություն		Արժեքային, USD	
		առանց ծրագրի	ծրագրի հետ	առանց ծրագրի	ծրագրի հետ
Հասույթ պանրի վաճառքից	տոննա	29.950	69.675	94,444.4	232,284.0
Ընդամենը հասույթ	USD			94,444.4	232,284.0
Ծախսեր					
Կաթ, սեփական արտադրության	տոննա	2.5	3.5	617.3	1,251.3
Կաթի գնում	տոննա	98.5	194.3	24,321.0	69,444.4
Գնված 1 տոննա կաթի գինը	USD/ton	246.9	357.5		

Պանրի արտադրության ծախսեր	USD			37,530.9	85,802.5
Ընդամենը ծախս	USD			62,469.1	156,498.2
Զուտ հասույթ	USD			31,975.3	75,785.8
Ծրագրի շնորհիվ հասույթի ավելացում	USD				43,810.5
Եկամուտ/ծախս գործակից				0.51	0.48

77. Հաշվարկն իրականացվել է ըստ տարիների ներդրված վարկային գումարների համար հաշվի առնելով սպառման սահմանային հակվածությունը, գումարած տնտեսության մեջ ներդրված գումարի գոյացրած զուտ շահույթը (շահութաբերության միջին նորմա՝ 15%), հանած վարկի մայր գումարի մարումները (վարկի գումարի 1/5 մասի չափով) (սյուն՝ Ending Loan Balance + Interest):

Աղյուսակ 28. Տնտեսական բազմապատկիչը

Average Net profit margine	15%
Loan maturity period, years	7
Grace period, years	2
Marginal propensity of consumption	85.6%

	2009				2010			
	Initial Loan amount	Generated net income	Repayment	Ending Loan Balance + Interest	Initial Loan amount	Generated net income	Repayment	Ending Loan Balance + Interest
Loan amounts, USD	841,916				3,794,010			
Consumption, 2009	841,916	126,287		968,203				0
Consumption, 2010	720,680	108,102		828,782	3,794,010	569,102		4,363,112
Consumption, 2011	616,902	92,535	168,383	541,054	3,247,673	487,151		3,734,823
Consumption, 2012	528,068	79,210	168,383	438,895	2,780,008	417,001	758,802	2,438,207
Consumption, 2013	452,026	67,804	168,383	351,447	2,379,687	356,953	758,802	1,977,838
TOTAL, USD	3,159,593	473,939	505,150	3,128,382	12,201,377	1,830,207	1,517,604	12,513,979
ECONOMIC MULTIPLIER	3.75			3.72	3.22			3.30

	2011				2012			
	Initial Loan amount	Generated net income	Repayment	Ending Loan Balance + Interest	Initial Loan amount	Generated net income	Repayment	Ending Loan Balance + Interest
Loan amounts, USD	1,806,468				2,057,040			


Consumption, 2009				0				0
Consumption, 2010				0				0
Consumption, 2011	1,806,468	270,970		2,077,438				0
Consumption, 2012	1,546,337	231,950		1,778,287	2,057,040	308,556	0	2,365,596
Consumption, 2013	1,323,664	198,550	361,294	1,160,920	1,760,826	264,124	0	2,024,950
TOTAL, USD	4,676,469	701,470	361,294	5,016,645	3,817,866	572,680	0	4,390,546
ECONOMIC MULTIPLIER	2.59			2.78	1.86			2.13

	2013				TOTAL
	Initial Loan amount	Generated net income	Repayment	Ending Loan Balance + Interest	(2009 - 2013)
Loan amounts, USD	5,350,913				6,442,394
Consumption, 2009				0	968,203
Consumption, 2010				0	5,191,894
Consumption, 2011				0	6,353,316
Consumption, 2012				0	7,020,985
Consumption, 2013	5,350,913	802,637	0	6,153,550	11,668,705
TOTAL, USD	5,350,913	802,637	0	6,153,550	31,203,103
ECONOMIC MULTIPLIER *8	1.00			1.15	4.84

*8 - ù³ÝÇ áñ òÛ³É ¹»áúáðÛ ÛáðÉÇáÉÇÏíáñÁ Ñ³ß³ñííáðÛ Ç è³ÑÛ³Ý³-³í A³Û³³Ñ³í³íÇ Ñ³Û³ñ` 2009-2013ÄÄ., áðèÇ ÛáðÉÇáÉÇÏíáñÇ Çý»ÏíÁ ³í»ÉÇ ÷áùñ Çª 4.84, ù³Ý Çñ³³ÝáðÛ Ç` 6.94

ԳՖԿ ազդեցության գնահատում հարցվողների կողմից

78. Հարցվողներին խնդրվել է գնահատել վարկի ազդեցությունը ընտանիքի կենսամակարդակի



բարձրացման տեսանկյունից: Հարցաթերթով, ընտանիքի կենսամակարդակի բարձրացման հարցի պատասխանի 3 տարբերակ էր առաջարկվել. կենսամակարդակի ոչ մի բարձրացում, միջին և բարձր չափի բարձրացում:

Պատասխանները բաղդատվել են ըստ ԳՖԿ և այլ վարկառուների:

Ինչպես երևում է բերված 3-6 նկարներից, կենսամակարդակը բնութագրող բերված բոլոր չափանիշներով վարկերի ազդեցության գնահատականը ԳՖԿ վարկառուների մոտ համեմատաբար ավելի բարձր է քան այլ վարկեր ստացած գյուղացիական տնտեսություններում: ԳՖԿ վարկառուները, որոնք կարծում են, որ վարկը չի նպաստել պարենի և եկամտի ծավալների ավելացմանը, կազմում են հարցվածների 17-21 %-ը: Այն դեպքում, երբ այլ վարկառուների մոտ նման գնահատական տված հարցվողների բաժինը տատանվում է 22-46 % -ի սահմաններում: ԳՖԿ վարկառուների հիմնական մասը՝ 70-80 %-ը համարում են, որ վարկն իրենց ընտանիքի կենսամակարդակը բարձրացրել է միջին չափով: Կենսամակարդակի վրա բարձր ազդեցության գնահատականով ԳՖԿ շահառուներն աննշան չափով զիջում են այլ վարկառուների գնահատականին:

Նույն պատկերն է նաև վարկի ազդեցությանը ընտանիքի անդամի գյուղ վերադառնալու հարցի պատասխաններում: Այսպիսով, ԳՖԿ շահառուներն, ընդհանուր առմամբ ավելի գոհ են իրենց ստացած վարկերից, քան այլ վարկեր ստացած գյուղացիական տնտեսությունները: Տոկոսադրույքների համեմատությամբ պարզվում է, որ ԳՖԿ վարկերն 1-1.5 %-ով ավելի ցածր են քան այլ վարկերի տոկոսադրույքները: Այլ վարկերի միջին չափը՝ 1.1 մլն. դրամ, ուղիղ 2 անգամ ցածր է ԳՖԿ միջին վարկի չափից: ԳՖԿ վարկի

միջին տևողությունը կազմում է 2.1 տարի, այլ վարկերի 1.8 տարվա դիմաց: Հայտի ներկայացումից մինչև վարկի ստացումը ընկած ժամանակը գրեթե նույնն է 2 վարկերի

համար: ԳՖԿ վարկերի դիմաց գրավ է պահանջվել յուրաքանչյուր 4-րդ վարկից, իսկ այլ վարկերի դեպքում գրավ են պահանջել յուրաքանչյուր 2-րդ վարկից:

79. Մոտակա 1 տարվա ընթացքում պատրաստվում են նոր վարկի համար դիմել հարցվածների մոտ կեսը: Վարկային գումարը, որի համար պատրաստվում են դիմել գյուղացիական տնտեսությունները, ԳՖԿ վարկառու միջին տնտեսության համար կազմում է 5.1 մլն. դրամ, իսկ այլ վարկառու միջին տնտեսության համար՝ 3.3 մլն. դրամ: ԳՖԿ 26 վարկառուներից 22-ը, նոր վարկի համար նորից պատրաստվում են դիմել ԳՖԿ, այն դեպքում, երբ 21 այլ վարկառու տնտեսություններից 16-ը որոշել են փոխել իրենց վարկառու կազմակերպությունը:

Արդյունքների ամփոփում ըստ չափանիշների

Ակտուալության գնահատում

80. ՇՀՖԾ «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի նպատակներն, ընդհանուր առմամբ համապատասխանում են Հայաստանի Հանրապետության զարգացման առաջնահերթություններին: Ծրագրի նպատակները համահունչ են ՀՀ գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարության և ՀՀ-ում աղքատության կրճատման 2006թ. ռազմավարության նպատակներին, ինչպես նաև ԳԶՄՀ երկրում գործունեության նպատակներին:
81. Ծրագրի նպատակները և դրանց հասնելու ուղղությունները համահունչ են երկրի գյուղատնտեսության առջև ծառայած հետևյալ խնդիրների լուծման տեսանկյունից. ա)ներդրումների ավելացում ագրոպարենային ոլորտում, բ)գյուղական ֆինանսական համակարգի ձևավորման խթանում, գ)կանանց, հողագուրկների, գործազուրկների, թերզբաղվածների և գյուղական այլ խոցելի խմբերի համար աշխատեղերի հնարավորությունների ստեղծում:
82. Նպատակները համընկնում են երկրի զարգացման կառավարության, գյուղական համայնքների, երկրի ագրարային ոլորտում գործող այլ դոնորների և այլ համագործակից գործընկերների նպատակներին և դրանց իրականացման ռազմավարական ուղղություններին:
83. Համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողներին և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապեր ունեցող ձեռնարկություններին աջակցելու, ծրագրի ռազմավարությունը, գյուղական աղքատության կրճատման տեսանկյունից, համապատասխանում է երկրի կողմից գյուղում և գյուղատնտեսությունում տարվող քաղաքականությանը:
84. Միևնույն ժամանակ, ծրագրում բացակայում են գյուղական աղքատներին և կանանց ուղղակի աջակցության հստակ մեխանիզմներ, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել նրան, որ ծրագրից օգտվեն միայն համեմատաբար ապահովված տնտեսությունները: Ինչու բանկերը և վարկային կազմակերպությունները պետք է շահագրգռված լինեն գյուղական աղքատներին և մյուս խոցելի խմբերին վարկեր տրամադրել, երբ վերջիններս չունեն գրավի միջոցներ, իսկ նրանց հետ վարկային կոլեկտիվ պատասխանատվություն վերցնել շատ համագյուղացիներ չեն ցանկանա:
85. Ծրագրի արդյունավետությունն ավելի կբարձրանար, եթե ռազմավարությունում ներառվեր գյուղատնտեսական մթերքների և արտադրանքի իրացման խթանումը, որի հիմնական ուղղությունները կհանդիսանային. 1)արտահանման մեծ ներուժ ունեցող արտադրությունների խրախուսումը և 2)շուկայական ենթակառուցվածքների զարգացումը:
86. Ընդհանուր առմամբ, ՇՀՖԾ «Գյուղական ֆինանսներ» բաղադրիչի ակտուալության ռեյտինգը բավարար է (5), քանի որ ծրագրի նպատակներն ընդհանուր առմամբ համապատասխանում են երկրի կողմից իրականացվող աղքատության կրճատման ռազմավարությանը և գյուղական աղքատների կարիքներին:

Էֆեկտիվության գնահատում (Effectiveness)

87. Դրված նպատակների իրականացման և սպասվելիք արդյունքներին հասնելու տեսանկյունից ՉՖԿ գործունեությունը էֆեկտիվ էր: Ընդհանուր առմամբ ծրագրով դրված նպատակները հիմնականում իրականացվել են և ստացված արդյունքները հիմնականում համապատասխանում են ծրագրային սպասվելիք արդյունքներին:
88. Ըստ առանձին ենթադրատների ներկայացված ֆինանսական վերլուծություններն ու մոդելները վկայում են, որ գյուղական փոքր և միջին ձեռնարկություններին ծրագրի կողմից տրված ֆինանսական աջակցությունը նպաստել է նոր աշխատատեղերի ստեղծմանը, արտադրության ծավալների ավելացմանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը և ըստ այդմ եկամուտների ավելացմանը:
89. Գյուղական համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողներին տրված ֆինանսական աջակցության հետ բարենպաստ պայմաններ են ստեղծվել գյուղմթերքների արտադրության և իրացման ծավալների ավելացման համար, որը որոշ չափով նպաստել է գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:
90. ՉՖԿ շահառու փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք հիմնականում զբաղվում են գյուղատնտեսական արտադրությամբ և գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ, մասնավորապես գյուղմթերքների վերամշակման ոլորտում նախապատվությունը տալիս են կանանց, քանի որ նրանք վերամշակման հարցերում անհամեմատ ավելի հմուտ են:
91. Միևնույն ժամանակ, սպասվող եկամուտների ավելացումը գրանցվել է միայն համեմատաբար ավելի ապահովված խմբերում: Ամենաաղքատ խմբերում գտնվող տնտեսությունները, հիմնականում զբաղվելով ներտնտեսային ուղղվածություն ունեցող գյուղատնտեսությամբ, եկամուտներ չեն ավելացրել նաև վարձու աշխատանքի միջոցով և արդյունքում կենսամակարդակի որևէ բարելավում չեն ստացել:
92. Հանրապետությունում աղքատության մակարդակը համեմատաբար բարձր է սահմանամերձ և լեռնային բնակավայրերում և այս տեսանկյունից վարկերի ստացման ետնապահների թվում Տավուշի ու Շիրակի մարզերի առկայությունը, ՇՀՖԾ նպատակների իրականացման տեսանկյունից թերացում կարելի է համարել:
93. Հաշվի առնելով վերը նշվածը ՉՖԿ գործունեության էֆեկտիվության ռեյտինգը չափավոր բավարար է (4):

Արդյունավետության գնահատում (efficiency)

94. ՉՖԿ շահառու ձկնաբուծության, գինեգործության, ջերմոցային, կաթնամթերքի արտադրության ձեռնարկություններում և անասնապահական ու այգեգործական գյուղացիական տնտեսությունների ծրագրերի ֆինանսական վերլուծությունները (տես Հավելվածները) ցույց են տալիս, որ ներդրումների փոխհատուցման ներքին տոկոսադրույքների (IRR) և ընթացիկ զուտ արժեքների (NPV) ցուցանիշներն, ընդհանուր առմամբ բավականին բարձր են: Ծրագրերն արդյունավետության բարձր մակարդակ են ապահովել մինչ ծրագիրը և ծրագրից հետո տնտեսական արդյունքների ստացման հարցում:
95. ՉՖԿ շահառու ձեռնարկություններում արձանագրվել է եկամտաբերության բարձր մակարդակ: Շահառու գյուղացիական տնտեսություններում, մինչև ծրագիրը և ծրագրից հետո

- ժամանակահատվածում, եկամտի ավելացման մակարդակը զգալիորեն գերազանցում է հարցման կոնտրոլ խմբի տնտեսությունների եկամտի մակարդակը:
96. Ծրագրի շնորհիվ զգալիորեն ավելացել են մշտական և սեզոնային աշխատողների թվաքանակը, որը նպաստել է հիմնականում կանանց համար աշխատատեղերի ստեղծմանը:
97. Ծրագրի շահառու գյուղացիական տնտեսություններում արձանագրվել է բուսաբուծական և անասնապահական մթերքների ապրանքայնության մակարդակի ավելացում, որը լրացուցիչ ֆինանսական հոսքեր է ապահովել գյուղացիական տնտեսությունների համար:
98. Շահառու տնտեսություններում ավելացել է անասունների զխաքանակը, որի աճը զգալիորեն գերազանցում է կոնտրոլ խմբի տնտեսություններում արձանագրված անասնազխաքանակի աճին:
99. Շահառու տնտեսություններում, կոնտրոլ խմբի տնտեսությունների համեմատությամբ, զգալիորեն ավելացել են նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման ծավալները, ինչպես նաև վերամշակված արտադրանքի ապրանքայնության մակարդակը:
100. Միաժամանակ, գյուղացիական տնտեսություններում եկամուտների ավելացումը չի վերաբերում համեմատաբար աղքատ տնտեսություններին, որոնց մոտ եկամտի աճի մակարդակը զգալիորեն ցածր է ընդհանուր շահառուների խմբի միջին մակարդակից:
101. Շահառու գյուղացիական տնտեսություններում, կոնտրոլ խմբի տնտեսությունների համեմատությամբ չի ավելացել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության մակարդակը:
102. ԳՖԿ գործունեության արդյունավետության ռեյտինգը բավարար է (5):

Ազդեցությունը գյուղական աղքատության վրա

103. Ծրագրի շնորհիվ գյուղական փոքր և միջին ձեռնարկությունները և գյուղացիական միջին ու մեծ գյուղացիական տնտեսությունները եկամտի զգալի աճ են արձանագրել: Միաժամանակ բավականին թվով աշխատատեղեր են ստեղծվել, որոնցում հիմնականում ներգրավվել են կանայք, իսկ սեզոնային աշխատանքներում՝ գործազուրկներ և թերզբաղվածներ, ինչի արդյունքում նրանք նույնպես եկամտի որոշակի ավելացում ունեն: Ծրագրի ազդեցությունը թույլ է ցածր եկամուտ ունեցող գյուղացիական տնտեսությունների վրա, որոնց եկամուտները մինչ ծրագիրը ժամանակի համեմատությամբ կամ նվազել է կամ եկամտի ավելացած մակարդակով զիջում են կոնտրոլ խմբի տնտեսություններին:
104. Շահառու տնտեսություններում հողատարածքների ավելացում չի արձանագրվել, ավելին փոքր տնտեսություններում այն աննշան նվազել է: Դրա փոխարեն ավելացել է անասնազխաքանակը, որի աճի տեմպը ԳՖԿ շահառու տնտեսություններում ավելի բարձր է քան կոնտրոլ խմբի տնտեսություններում:
105. Կոնտրոլ խմբի տնտեսությունների համեմատությամբ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության մակարդակը գտնվում է գրեթե նույն մակարդակի վրա: Եկամտային ցածր խմբերում եկամուտների նվազմանը զուգահեռ չի ավելացել նաև սեփական արտադրության սննդամթերքների օգտագործման մակարդակը, ինչը նշանակում է, որ այս խմբում պարենային անվտանգության հարցով խնդիրներ կան:
106. ԳՖԿ շնորհիվ գյուղական վայրերում լայն ներգրավածություն են ապահովել մեծ թվով վարկային կազմակերպություններ, որոնք ի տարբերություն բանկերի ավելի ձկուն են և հակված են աշխատելու համեմատաբար փոքր և աղքատ տնտեսությունների հետ:

107. Ընդհանուր առմամբ, գյուղական աղքատության վրա ծրագրի ազդեցության ռեյտինգը չափավոր բավարար է (4):

Կայունության գնահատում

108. ԳՖԿ ծրագրերի կայունության մակարդակը բավականին բարձր է: Շահառու փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսատնտեսական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք տնտեսական արդյունավետության բարձր մակարդակ են ապահովել և ավելացող ֆինանսական հոսքերի պայմաններում լիովին կարող են ինքնուրույն շարունակել իրենց գործունեությունը: Տնտեսական տեսանկյունից լավ վիճակում են նաև միջին և մեծ գյուղացիական տնտեսությունները, որոնց եկամուտների ավելացման մակարդակը նույնպես բավարար է հետագա գործունեության հաջող զարգացման համար: Որոշ խնդիրներ ունեն փոքր գյուղացիական տնտեսությունները, որոնց փոքր չափերը թույլ չեն տալիս ապահովել այնպիսի ֆինանսական հոսքեր, որոնք բավարար լինեն գործունեության հետագա շարունակման համար: ԳՖԿ ծրագրերի կայունության ռեյտինգը բավարար (5) է:

Սեռերի հավասարություն և կանայք

109. Ծրագիրը հատուկ կանանց ուղղված մեխանիզմներ և միջոցառումներ չէր նախատեսել, եթե չհաշվենք այն մտայնությունը, որ գյուղական ձեռնարկությունների ընդլայնման դեպքում աշխատատեղերի մեծ մասը բաժին կհասնի կանանց: Ընդհանուր առմամբ այդպես էլ եղել է և ծրագրերի ընդլայնման ժամանակ աշխատատեղերը հիմնականում կանանց են հասել: Վարկեր ստանալու համար կանայք որևէ արտոնություններ չեն ունեցել, չնայած նրան, որ բոլոր բանկային և վարկային կազմակերպություններում կարծիք կա, որ կանայք ավելի պարտաճանաչ վարկառուներ են: Ընդհանուր առմամբ կանայք խնդիրներ չեն ունեցել ծրագրից օգտվելու հարցում: ԳՖԿ ծրագրերի սեռային հավասարության ռեյտինգը բավարար (5) է:

Պարտնյորների գնահատում

110. Ծրագրի բոլոր գործընկերները՝ ԳԶՄՀ, ՀՀ Կառավարություն, ֆինանսական ինստիտուտներ, իրենց վրա դրված պարտականություններն իրականացրել են ժամանակին և առանց լուրջ խախտումների: ԳԶՄՀ իրականացման գնահատականը խիստ բավարար է (6), իսկ ՀՀ կառավարության և ֆինանսական ինստիտուտների գնահատականը բավարար է (5):

Գնահատման ամփոփում

111. ՇՀՖԾ «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի իրականացումը ընդհանուր առմամբ հաջողված կարելի է համարել և ԳԶՄՀ Մոնիտորինգի և գնահատման ուղեցույցով սահմանված 6 բալանի համակարգով⁹ գնահատել **Քավարար (5)**:

112. Ըստ գնահատման չափանիշների, «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի գնահատումը բերված է Աղյուսակ 29-ում:

Աղյուսակ 29 «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի գնահատումը

Չափանիշի անվանումը	Ռեյտինգը
Ծրագրի իրականացում	
Ակտուալությունը	5
Էֆեկտիվությունը	4
Արդյունավետությունը	5
Ծրագրի իրականացման գնահատականը	4.7
Ազդեցությունը գյուղական աղքատության վրա	4
Գնահատման այլ չափանիշներ	
Կայունությունը	5
Սեռերի հավասարություն և կանանց իրավունքների ընդլայնում	5
Ընդհանուր գնահատում	5
Գործընկերների գնահատում	
ԳԶՄՀ	6
ՀՀ կառավարություն	5

⁹ -1=ԷՇԵԻ³Կմ³Դճճ, 2=Կմ³Դճճ, 3=ձ³Իճճ³Կմ³Դճճ, 4=ձ³Իճճ³մ³Դճճ, 5=մ³Դճճ, 6=ԷՇԵԻ³մ³Դճճ

Ֆինանսական ինստիտուտներ	5
Անփոփ ռեյտինգ	5

Առաջարկություններ

- Հետագա ծրագրերում անհրաժեշտ է նախատեսել ֆերմերների կարողությունների ուժեղացում բաղադրիչ: Ներկայումս վարկառու գյուղացիական տնտեսություններին աջակցությունը տրվում է միայն բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային մասնագետների կողմից, որոնք միայն ֆինանսական բնույթի խորհրդատվություն կարող են տալ: Միզուցե արժե մտածել ՉՖԿ-ում գյուղատնտեսական տարբեր մասնագետների փոքր խումբ ստեղծելու մասին, որոնք մոնիտորինգի հետ միասին խորհրդատվական և այլ բնույթի աջակցություն կարող են տրամադրել ֆերմերներին:
- Հանրապետության գյուղատնտեսության արդյունավետության ներկա մակարդակը թույլ չի տալիս գյուղատնտեսական արտադրության միջոցով, առավել ևս փոքր տնտեսությունների համար, հասնել աղքատության կտրուկ կրճատման: Հետագա ծրագրերում կարելի է մտածել գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության խթանման մասին:
- Հնարավորության դեպքում ավելացնել այգեգործական (պտղաբուծական, խաղողագործական) վարկերի արտոնյալ ժամկետը, 18 ամսից հասցնելով մինչև 36 ամսի:
- Չնայած վարկային կազմակերպությունների մուտքից հետո գյուղատնտեսության վարկավորման գործընթացի լուրջ ակտիվացմանը, շատ գյուղացիական տնտեսություններ տեղյակ չեն ՉՖԿ վարկերի մասին և ավելի բարձր տոկոսադրույքով վարկեր են վերցնում: Ծրագրի հրապարակայնացման դեպքում կավելանա վարկերի պահանջարկը և մրցակցության ավելացման արդյունքում կբարձրանա վարկերի արդյունավետության մակարդակը:
- Բանկերը լավագույն միջոցը չեն ՉԶՄՀ գլխավոր նպատակին՝ աղքատության կրճատմանը հասնելու համար: Աղքատ տնտեսությունների հետ բանկերը դժվամությամբ են համագործակցում, ինչը չի կարելի ասել վարկային կազմակերպությունների մասին: Որդեգրել ՉՖԿ վարկավորման գործընթացից բանկերի դանդաղ դուրս մղման քաղաքականություն:
- Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների առաջնային խնդիրն այսօրվա դրությամբ, արտադրված գյուղատնտեսական մթերքների և արտադրանքի իրացման խնդիրն է: ՉԶՄՀ հետագա ծրագրերի հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի արտահանման ներուժ ունեցող գյուղատնտեսական ու վերամշակող արտադրությունների խթանումն ու արտահանման գործընթացի կազմակերպմանն աջակցությունը:
- Ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ապահովման և գնահատման արդյունավետության բարձրացման տեսանկյունից, հետագա ծրագրերում ներառել գնահատման հետազոտությունների՝ հիմնարար (Baseline), կրկնակի (Repeat) և եզրափակիչ(Complete) անցկացումը: Այսպիսի հետազոտություններ անցկացնելու անհնարինության դեպքում, վարկային հայտերում ներառել վարկառուի վերաբերյալ մեկնարկային սոցիալ-տնտեսական հիմնական տեղեկատվությունը:

**TERMS OF REFERENCE FOR
SHORT-TERM CONSULTANT ON IMPACT ASSESSMENT OF RFF**

RECRUITMENT: Local competitive bidding

CONTRACT: Three months contract, July-September 2013

BACKGROUND: THE PROJECT

FMAP represents an investment of over USD 36 million financed by IFAD, OFID, Government of Denmark, Government of Armenia, financial institutions and programme clients. It aims to improve the economic and social status of poor rural people in Armenia. The programme became operational in May 2008 and is scheduled for completion in June 2013. It constitutes the fifth IFAD-financed programme in Armenia, and pioneers the creation of an equity fund in support of rural poverty reduction, innovative for both Armenia and IFAD; provides refinancing capital to rural lending to participating financial institutions; and supports rural infrastructure construction. To date, 97% of the implementation period has elapsed with a highly satisfactory disbursement rate of 96% on the IFAD Loan; 94% on the IFAD Grant and 99% on the Danish Grant.

As one of its key investments, FMAP provided additional funding to the operations of the Rural Finance Facility (RFF). This refinancing facility was established with IFAD support during the earlier READP project. The RFF supports rural economic development in Armenia by re-financing loans of participating financing institutions. With additional injections of capital from the World Bank, the Millennium Challenge Corporation and the Armenian Government, the RFF today refinances or manages lending operations to the value of some USD 30 million. FMAP's investment into the RFF operation consisted of approximately USD 2 million of additional investment capital.

OBJECTIVE OF ASSIGNMENT AND GENERAL SCOPE OF WORK

In view of the project closing and of the overall assessment of FMAP achievements in the Project Completion Report (PCR) by November 2013, the collection of the impact data for the FMAP activities needs to be done.

As very limited data is available on the impact of the RFF operations, a field survey of the RFF impact needs to be conducted. In the lack of a baseline study, this will have to be done on a recall basis. While the overall responsibility of the M&E function in the FMAP is with the M&E Section of the Project Implementation Unit of FMAP, it has been decided to recruit a short-term M&E consultant to conduct a field impact survey on the RFF operations and to process the collected data into an RFF impact report that can be used as an input to the final PCR. IFAD recently organised a Technical Support Mission to FMAP (May-June 2013). In the Technical Annex 1 of the report of that mission, overall guidelines are given on how carry out the impact survey on the RFF clients and how to connect the survey results to the farm and enterprise models that are used when the PCR of FMAP will be produced.

The assignment should aim at extracting knowledge with regards to the economic impact derived from rural financial service projects with emphasis on:

- direct incremental income generated;

- indirect and induced economic activity and related income generated in the rural areas;
- increase in assets;
- on-farm and off-farm employment generated from the direct, indirect and induced economic activities.

Following this approach, the FMAP impacts should be investigated through field assessments, validation of production models and calculation of the Economic Multiplier Impacts (EMIs). The estimated benefit streams for enterprise and infrastructure models would then allow also the calculation of the investments' Internal Rate of Return (IRR) and Net Present Value (NPV) from a 20 years projection of monetary incremental incomes, to assess the efficiency in the use of capital. Such calculations would be done to calculate

- Financial return for the direct beneficiaries
- Economic return to the Armenian in terms of incremental direct and indirect tax revenue from increased economic activity (increased purchase of inputs, consumption, etc) from the investment compared with the cost of the IFAD loan.
- Rural economic impact in terms of incremental economic activity in the region from the investment.

For the RFF operations under the FMAP funding, the impact data shall be collected through a sample survey. This survey has to cover the impacts on both the individual borrowers and the agro-companies that have been refinanced by the RFF with the FMAP funds. The financing for the RFF operations from FMAP was around USD 2 million. With the revolving of this capital between October 2009 and December 2012, loans to the tune of around USD 3 million were issued from this capital.

The total number of borrowers from this financing source is around 140. It is recommended that the impact survey would be based on the sample size of 55 loans (approximately 40% of the total). Furthermore, to cover all types of borrowers, it is recommended that of the 55 borrowers selected, 10 would be companies, 10 registered individual entrepreneurs and 35 individual primary producers (mainly farmers).

It is recommended that borrowers from the following five sub-sectors would be included in the sample, to achieve a good coverage of the issued refinancing:

- Primary livestock production
- Greenhouses/horticulture
- Fish farming
- Milk processing
- Wine processing.

The final analysis for the aggregate financial return and economic impact should be based on stratified analysis of such sub-sectors.

SPECIFIC DUTIES OF CONSULTANT UNDER THE CONTRACT

Working under the guidelines of the M&E Section of FMAP and receiving support from the RFF staff, the Consultant will be responsible for the successful conduct of the RFF Impact Survey. Under this overall mandate, the key tasks of him/her include:

- Familiarise yourself with the approach and models to be used in the preparation of the final PCR

- Prepare, based on the PCR requirements, a detailed plan for the RFF impact survey, including the plan for the processing of the study material
- Decide, based on the agreed approach of Technical Annex 1 of the Supervision Mission Report, on the appropriate sub-sections to be included in the survey
- Design an appropriate field questionnaire for each of the selected sub-sectors
- Select, based on the agreed approach of Technical Annex 1 of the Supervision Mission Report, the persons and companies to be included in the survey sample
- Design an effective plan on how to organise the field data collection in practice
- Conduct, with RFF/FMAP support, the data field collection from the RFF beneficiaries
- Support the assumptions used for the calculation of the income streams with evidence from the PIU data or collect other information as required.
- Process the data collected from the field to tables and formats that can be used as an inputs to the PCR models
- Prepare a concise report of the key findings of the RFF Impact Survey, including key conclusions and recommendations on how to improve the RFF impact in the future.